


Urup to Uday  
26/1/05

Urup to Uday

891.99

C-51

1908





Արմ.

2-3774a

2-3774a

6 NOV 2011

891.99

Ե- 51

Գրիգոր Տալիեանց

# Ս Է Ր Ե Ի Կ Ռ Ի Ի

„Գնա բլբուլ թռիչք գնա,  
Այս արիւնստ աշխարհէն.  
Թռիչք բլբուլ էլ-մի կենա,  
Բաժանեցին քեզ վարդէն:



**ԻՆՎ. № 21331**

ԱՆԷՔՈՆՆԳՐԱԳՈՒ

Տպարան Յակովբ Ասատեանցի

1907

(32)

ԱՐԿԱՆՆԵՐ

Աղերսում եմ ինձ կենսատու —  
Անուշ գարուն շուտ բացուիր,  
Ու բողբոջէ վառ ծաղիկներ,  
Ինձ էլ նոր կեանք պարզելիր:

Համասփիւռ ու յամիկ շուշան,  
Հեզ մանիշակ բալասան,  
Իսկ ալ վարդեր թող զոց մնան,  
Սպասեն մինչ այն օրւան:

Փնջեր հիւսեմ, կրճքիս կապեմ,  
Գնամ պարկեմ շէմքի տակ,  
Երբ որ դուրս գալ իմ նազելին,  
Կուրծքս փարեմ օտքի տակ:




Թող այ վարդերն յայնժամ բացուին,  
Կրճքիս վերայ վառվուին,  
Երբ որ գնէ ոտը կրճքիս,  
Իմ նազելին—իմ փերին:

Գէթ մի վայրկեան ես կըդիտեմ,  
Հրաշագեղ լոյս գէմքին,  
Այնուհետեւ ես գոհ սրտով,  
Պիտ աւանդեմ իմ հոգին:

ԱՌ ԿՈՅՍՆ

Ով գեղանի կոյս աննման,  
Ընկալ սիրտս—քեզ ձօնեմ,  
Եթերային ստուերիդ տակ,  
Գոնէ մի ժամ ես նիրհեմ:

Քեզ սիրում եմ, քեզ պաշտում եմ,  
Անսահման ու անփոփոխ,  
Ա՛խ, շատ բարձր ես, քո բարձունքին—  
Միտքովս հասնել եմ կարող:



Մինչ երբ արդեօք խելացնոր,  
Միտքովս հասնել եմ կարող:

39530-67

Անտէր—անճար—անօգնական,  
Քեզնից բաժան տառապիմ:

Գթն վերաս, տեղ տուր հոգւոյս,  
Քո կրճքի մէջ ապաստան,  
Գա է միակ ինձ կենսատու,  
Իմ գրախտը Եղեմեան:

Գու ծուռացար ինձ յաւիտեան,  
Օտարներին զրկեցիր,  
Եւ քո վսեմ փառքից բաժան,  
Ինձ թշուառիս մաշեցիր:

ՀԵՅ ԱՂՋԻԿ

Սև աչերդ ինչպէս գիշեր,  
Միշտ վերաս մութ ես փոփուում,  
Ս,լ թշերիդ կրակները,  
Երակներիս մէջ հրհրում:

Արտասուքս գետ էս շինել,  
Գոնէ ճանապարհ տուր հոսէ,  
Անգնութ, գիտմամբ բանդ ես կապել,  
Որ ծով դառնա և ինձ խեղդէ:



Այն դու անխիղճ ու անհոգի,  
 Սև ունքերդ նետեր շինած,  
 Ուղղել ես այրուած ճակատիս,  
 Ինչպէս մի դահիճ կատաղած:

Մագերդ շինել ես շղթայ,  
 Սիրտս ու հոգիս ամուր կապել,  
 Ոճրագործ չեմ, ազիզ եարս,  
 Ինչո՞ւ կուզես դու ինձ պատժել:

Գ Ե Ղ Ո Ւ Հ Ի

Գարտիս նման սև մի հագնի նուշ աղջիկ,  
 Սև շորերը քեզ չի սաղում քնքուշ աղջիկ,  
 Գու ալ հագիր, կանաչ կապէ, քեզ մատաղ,  
 Սև շորը ինձ է վայել անուշ աղջիկ:

Աստղս խաւար, սիրտս խաւար — լոյս չունիմ,  
 Ցաւի ծով է իմ սև սիրտս, ուժ չունիմ,  
 Երկինքն ամպատ, լուսնեակն աղօտ, դու անգուժ  
 Ինձ մեռուցիր — էլ ապրելու յոյս չունիմ:

Բուք ու բորան — մութ մրրիկ պատեցիր,  
 Անբաղդ գլխիս նոր նոր դարտեր կապեցիր,

Ծլած ծաղկած սրտիս կարմիր վարդերի —  
 Քերթիկները կարկուտի պէս թափեցիր:

Մ Ռ Ս Ի Ր Ո Ւ Հ Ի Ն

Երեսդ կարմիր վարդ, շորերդ նախշուն,  
 Կուրծքդ հասած ուռի, մէջքդ խիստ ճկուն,  
 Պճնուել ես նման գարնան ծառներուն,  
 Ո՛ւր ես գնում ազիզ — անուշ նազելի,  
 Սիրտս կրակ լցիր դու անմարելի.

Համբերէ նազելիս գոնէ մի վայրկեան, { 1)  
 Իհետեմ հրաշագեղ դէմքիդ աննման:

Թէ մարալ ես՝ պէտք է անտառում լինիս,  
 Ջէյրանները միշտ սարերն են ման գալիս,  
 Եկ ինձ ասա, դու ծովի փերի չլնիս,  
 Ո՛ւր ես գնում ազիզ անուշ նազելի,  
 Սիրտս կրակ լցիր դու անմարելի...

Կարելի է հրեշտակ ես երկնային,  
 Իջել աշխարհ, վերջ տալ կուզես իմ կեանքին,  
 Թէ այդպէս է, ահա առ տար իմ հոգին,  
 Եուտ հեռացիր ազիզ անուշ նազելի,  
 Հանգցուր սրտիս կրակը անմարելի:

1) Ամեն տան վերջում կրկնել այս սողերը:




ՎՅՏՆԵԼԻ ՍԻՐՏ

Ես զգում եմ դառն ցաւեր,  
 Դառն կսկիծ սրտիս խորքէն,  
 Հայրենիքս տեսայ աւեր,  
 Հեռու ընկած իմ հօր տնէն:

Եղբարքս իրար են կոտորում,  
 Ես միայնակ անտէր կուլամ,  
 Տառապելով օտար երկրում,  
 Հայրենիք փրկել կըջանամ:

Եղբայրական սէր գոչելով,  
 Լեզուս չորցել քար է կտրել,  
 Ատելութեան մէջ ողբալով,  
 Արտասուքս ծով է դառել:



ԱԶՆԻՈՒԹԻՒՆ

Ո՛հ, հանգուցեալ ազնուութիւն,  
 Այլես չիք քեզ յարութիւն,  
 Ափսոս որ ես ուշ ծնուեցայ,  
 Ինչ կերպ լինելդ չըտեսայ:

Ինքդ մեռար ու չքացար,  
 Լոկ անունդ մնաց աշխարհ,  
 Որ նա շրջէ ծայրէ ի ծայր,  
 Կեղծ մարդկանց փառք տալու համար:

ԿԱՐՄԻՐ ԱՐԵՒ

Ի՛նչ տխրագոյն քող ես քաշել քո գէմքին,  
 Կարմիր արև, ո՛ւր են ցուքեր քո տեսքին,  
 Գու լալիս ես իրաւագուրկ թշուառին,  
 Որ թոռէ թոռ նուիրւած է օտարին:

Հագարաւոր անօգնական թշուառներ,  
 Գունատ մռայլ իբրև անշունչ գործիքներ,  
 Ծառայում են մէկի կամքին ու փառաց,  
 Մեթէ նոքա ոչնչից են գոյացած:



Չէ որ տեսար, դու արեգակ երկնային,  
 Նա էլ ծնուեց մօրից անբիժ մի մարմին,  
 Ինչպէս միւս մեծ մեծ մարդիք ծնուեցին,  
 Նոյն միակերպ աշխարհն առաւ ամեքին:

Այն երջանիկ մանուկն այսօր թշուառ է,  
 Անկիրթ, անտուն — անտէր միշտ կրթափառէ,  
 Դժոխային տանջանաց մէջ է մաշուում,  
 Մերկ ու քաղցած ընտանիքին հաց ճարում:

Ով հարուստ է ու զարգացած ներկայիս,  
 Թող վայելէ ամեն բարիքն աշխարհիս,  
 Թող միշտ զրկէ իր նմանին — ընկերին:  
 Մօտ է արգէն նոցա զազիր վաղճանին:

Հին ՆԱԽԻՋԵՒՆ

Թող արար աշխարհ քեզ լան ու ողբան,  
 Հայր Նահապետի իւր Նախիջևան,  
 Եւ նորա հոգին անհուն եթերից,  
 Բազմատանջ ազգին լինի ողբակից:


Քո սքանչելի դաշտ ու այգիներ,  
 Անձրևի փոխան՝ արիւնն է ցողեր:

Եւ քո դարատանջ ալևոր Մասիս,  
 Անին մոռացած, քո վիշտն է լալիս:

Քեզ էլ մատնեցին աւերակների,  
 Սրով, կրակով մի դաժան դատի,  
 Ա՛խ, քո կենսատու արևի ցոլքեր,  
 Շաղեցին գլխիդ մահւան սլաքներ:

Ո՛վ ցանեց արդեօք այդ արեան սերմեր,  
 Որ լարեց քո դէմ պարսից վոհմակներ,  
 Եւ վարակեց մեր հացն ու ջուր և կեանք,  
 Նորից հասցրեց մեզ թոյն ու տանջանք:

Թող ամօթ լինի այն հայի որդուն,  
 Ով սրտից վանէ վրէժխնդրութիւն,  
 Եւ ով որ այսքան արատներ մօռնայ,  
 Ողջ աշխարհի մէջ անարգւած մնայ:





Մ Ե Բ Բ Ե Լ Ե Լ Ե Լ

Ահա քո վրէժ լուծեցին այսօր,  
 Մայր իմ հայաստան վրէժ դարևոր,  
 Քո կտրիճ որդիք թռան ասպարէզ,  
 Կռվում են անվախ շքեղ է հանդէս:

Պարսից խուժանն է լալիս հառաչում,  
 Իսկ հայ քաջերի զէնքեր շառաչում,  
 Նոքա կատաղի վագրներ կտրած,  
 Նալիր, աջ ու ձախ պարսիկն է ընկած:

Մոլի իսլամի արևը թեքուեց,  
 Երբ հայի որդին կռուել սովորեց,  
 Կռուել կործանել գահեր ու ամրոց,  
 Թշնամեաց գլխին թափել հուր ու բոց:

Թող ճաքին շիրիմք, պատառին պատանք,  
 Թող դուրս սլանան մեր քաջ զօրականք,  
 Եւ դիտեն բարձրից թռուներն հարազատ,  
 Թէ ինչպէս զէնքեր շարժում են ազատ:



ԵՌ ՀՆՅԿՈՒՆԻՆ

Զքնաղ դէմքիդ մատաղ լինիմ,  
 Մէկ ինձ նայէ անուշ աչքով,  
 Միշտ քո սիրով կըտառապիմ—  
 Ես անընդհատ մաշուած սրտով:

Սու քեզ նուէր սիրտն իմ հոգեակ,  
 Պահիր ձեռքումդ ամեն վայրկեան,  
 Թէ շուտ մեռայ իմ աղաւնեակ,  
 Մնայ պատանդ քեզ յաւիտեան:

Արտասուալից աչքերս առած—  
 Միշտ քո շուրջը ման եմ գալիս,  
 Տուած ցաւդ կըծքիս սեղմած,  
 Կուրծքս ուռած սէր եմ լալիս:

Վիճակուեցաւ այսօրուանից,  
 Որ քո սիրով պիտի այրուիմ,  
 Կեանքս կախուած է քո ձեռքից,  
 Կամ սպանիր, կամ թող ապրիմ:

Հարիւր տարի թէ կեանք ունիմ,  
 Բոլորը քեզ կուտամ նուէր,



Իսկ դու ալսքանի փոխարէն,  
Ինչ նուիրէ մի օր ու սէր:

Իմ կարօտը և իմ իղձեր,  
Պիտ յագենան մէջ այն օրուն,  
Անգին ըոպէ, անգին ժամեր,  
Հաւասարեն հազար տարուն:

Այն ժամերը ջերմ սիրային,  
Ես անմոռաց պիտի չիշեմ,  
Քո քնքուշիկ համբոյրներին,  
Ամեն մէկին մի երգ հիւսեմ:

ԹԱՐԵՆԵԿԵՆՑ ՎԵ՛ ՀՄԱՐԴՈՒՆ

Ահա ցոլա փայլ ճաճանչն արևուն,  
Թշուառի դէմքին մի նոր լոյս շողեց,  
Գարերով տանջող բռնութեան ճանկից,  
Լուրն ազատութեան աշխարհ ողողեց:  
Ծաղկունք, թռչունք թող բերկրին,  
Վարդ ու բլբուլ թող ժպտան,  
Ծիտ ու ծիծառ թող հրճուին,  
Թշուառի ազատութեան:

Ել այսուհետև անմեղի արեամբ—  
Չեն սուգուելու կենսատու զաշտեր,  
Այլ հանգիստ սրտով ու խաղաղութեամբ,  
Պիտի կարենան ապրել թշուառներ:  
Երկնից աստղեր կրցուան,  
Երկրից ծտեր ծլվուան,  
Ծովեր ծիրանի հագած,  
Ափերից դուրս կըխալտան:

Փշրուեց շղթալք, խորտակուան բանդեր,  
Վե՛հ ազատութեան վսեմ անուան տակ,  
Ջնջուեցին նաև այն բռնակալներ,  
Պարզուեց ստրուկի կարմիր դրօշակ:  
Անմահ Մարքսը ղեկավար,  
Տեսիր բաղձանքդ իկատար,  
Քո պանծալի վե՛հ անուն,  
Պիտ ընթանա զարէգար:





ՄԱՆՈՒԿԱՆ ՈՂԻ

Կարմիր վարդեր թող սև հագնին ու սգան,  
Ախ խլեցին — տարան բալէս աննման,  
Խաւարեցին փայլուն աստղս յաւիտեան,  
Ի՛նչպէս չլամ. կասեն մի լար խեղճ մայրիկ:

Բլբուլ երգէ, ինձ ձայնակցէ սղբազին,  
Էլ մի կանչիր քո սիրական ալ վարդին,  
Ախ, չորացաւ սրտիս ծաղկազարդ այգին.  
Ի՛նչպէս չլամ. կասեն մի լար խեղճ մայրիկ:

Թող ցամաքի գետ աղբիւրդ բղխելուց,  
Թող դադարին քո ալիքներ խալտալուց,  
Արտասուքս թող գետ դառնա իմ լալուց,  
Ի՛նչպէս չլամ. կասեն մի լար խեղճ մայրիկ:

Հաւքեր օրօր երգեցէք,  
Անուշ քնի իմ բալէն,  
Զկալ մի գեղ որ բուժէ,  
Սև սրտիս խորունկ եարէն:




\*  
\* \*

Ծառի տակը անուշ հովին,  
Եարս պարկել է մէջ զովին,  
Նա քնած է հանգարտ սրտով,  
Ինձ թողել է սիրոյ դարտով:

Վարդերը վերմակ է արել,  
Քնքուշ մարմինն է վաթաթել,  
Կլոր ու ճերմակ թւերը,  
Ծածկել են սև թաւ մազերը:

Արեգակը զուրս է եկել,  
Եարիս ճակատին է հասել,  
Գեռ չի զարթնի անուշ քնէն,  
Եարալի եմ սև աչերէն:

39530-63





Բ Ա Ն Կ Ո Ւ Մ

Մուլթ մուսլ է բանդը, մուլթն է և երկինք,  
 Սև են արև լուսին սև է իմ աստղիկ,  
 Ապական օդի մէջ շնչել չեմ կարող,  
 Շղթայով կաշկանդւած՝ շարժւիլ չեմ կարող:

Կուլամ ու կարտասուեմ բանդի մուլթ խորշում,  
 Արև, լուսից զրկուած այս սև աշխարհում,  
 Անողորք են մարդիք, անգուլթ ու վատթար,  
 Չեն լսում ողբերքս, տանջում չարաշար:

Ա՛խ, քեզ բիւր երանի, Արծիւզ անարատ,  
 Որ միշտ սաւառնում ես անհոգ ու ազատ,  
 Ոսկերքս հալւեցին դառն վշտերից,  
 Մեռնում եմ կարօտով, ա՛խ, լոյս աշխարհից:



Ե Ր Գ Ի Չ

Հերիք լալազին երգես ո՛վ երգիչ,  
 Հերիք մեր սրտերն այրես ո՛վ երգիչ,  
 Մուռացիր անցեալ քո տխուր ողբեր,  
 Ուժգին հնչեցուր քնարիգ լարեր:

Քո ախ ու վախով մեզ թմրեցուցիր,  
 Քո լալկան երգով մեր սիրտն այրեցիր,  
 Մի՛թէ չկայ քո մէջ սիրտ ու հոգի,  
 Որ մեկնես ձեռքդ դու ել մի գէնքի:

Հացդ խլում են, նստում ես լալիս,  
 Քեզ կողոպտում են, մերկ ման ես գալիս,  
 Թէ եարըդ տարան, հասիր ազատէ,  
 Թէ քոյրդ տարան, մեռիր ու փրկէ:





ՍՇՐԻ ԼԵՆՋԻՆ

Սարի լանջին ման եմ գալիս,  
 Փշերի մէջ ոտաբոբիկ,  
 Քեզ համար միշտ ջան եմ տալիս,  
 Զան ու ջէլրան իմ անուշիկ:

Ծակծկեցին սուր սուր փշեր,  
 Արուն պրծել կրծլծլայ,  
 Ա՛խ, ազիզ ջան, էլ չես լիշեր,  
 Սիրտս մենակ կըմոմոայ:

Անտէր անտէր ինչպէս ապրիմ,  
 Սիրոյ ծարաւ սիրտս կուլայ,  
 Ա՛խ, ես էլ ո՛ւմ կրծքին փարւիմ,  
 Ո՛ւր ես ծաղիկն իմ արլալայ:

Ա՛խ, թողեցիր մենակ անտէր,  
 Է՛ր չըտարար ինձ էլ քեզ հետ,  
 Էն ամալի մեծ մեծ սարեր,  
 Թող ընկնէի ես էլ քեզ հետ:

Ազգի սիրով էրուած խորուած,  
 Սիրտդ առած, ո՛ւր ես քնում,  
 Ա՛խ, իմ աչքէն հեռու ընկած,  
 Էլ յաւիտեան քեզ չեմ տեսնում:

ՀԷՔ ԱՆՉԿԱԼԻՆ

Սիրտս ծով է դառել, ծփում կրծքիս տակ,  
 Ամբողջ մարմնով մտել ես հոն կըլողաս,  
 Ճերմակ լանջիդ փրփուրք կապել են պսակ,  
 Քնքուշ ձեռամբ մերկ սրտիս հետ կըխաղաս:

Կոհակները երբեմնապէս մարմանդ են,  
 Երբեմն էլ կատաղի հարուժ են կրծքիս,  
 Թէ չես սիրում դուրս եկ իմ սրտի ծովէն,  
 Պոնէ հանգիստ առնէ իմ տանջուած հոգին:

ՀԸՅ ԵՂԲՕԲՍ

Ե՛կ համբուրւենք իմ հարազատ,  
 Եւ իմ անգին հայ եղբայր,  
 Եկ դրօշմենք մեր ճակատին,  
 Սիրոյ նշանն հաշտարար:

Ե՛կ եղբայրս աննման,  
 Չնջենք անուն երկական,  
 Մի վեհ միջոց ստեղծենք,  
 Ի փրկութիւն ամենայն: 1)

1) Այս չորս տողը ամեն տան վերջում պէտք է կրկնել:



Մեր արիւնն ու մեր սակրներ,  
 Շաղախուել են միատեղ,  
 Եւ ծնողը մեզի մի մայր—  
 Հայ աշխարհն է լուսագեղ:

Թող ցամաքի մեր երակաց,  
 Ատելութեան դառն արիւն,  
 Թող չքանայ մեր սրտերից,  
 Կուսակցական խորթ անուն:

Ի Մ Մ Ո Ւ Ս Ը Յ Ի Ն

Գնա՛ մուսաս, շուտ հեռացիր ինձանից,  
 Ո՛հ, այլևս ես քեզ տիրել չեմ կարող,  
 Տուր վերջնական քո հրաժեշտն իմ սրտից,  
 Ես անկիրթ եմ, քեզ պաշտպանել չեմ կարող:

Գնա՛ գտիր դու զարգացած մի էակ,  
 Թող նա տիրէ քեզ այսուհետ մշտական,  
 Գափնիններից շքեղ դալար մի պսակ,  
 Այս իմ տգէտ գանկն ու ճակատ չեն արժանա:

Ա՛խ թէև դու ինձ սիրեցիր, ո՛վ մուսայ,  
 Զուր կջանաս ես չեմ կարող լինել այն,  
 Ո՛հ, այլևս իմ սրտիս մօտ ման մի՛ գայ,  
 Ինձ համար չէ այն ոսկեզարդ պերճ արձանա:

Ը Ն Գ Ի Ի Մ Ը Խ Ս Ս Ո Ւ Թ Ի Ն

— Սազը դօշխ եմ դրել,  
 Սէրդ սրտիս է տիրել.  
 Քնքուշ աղջիկ, ալվան ծաղիկ, իմ նանիկ.<sup>1)</sup>  
 Անուշ աղջիկ քո սիրուց,  
 Բռնի աշղղ եմ դառել.  
 Քնքուշ աղջիկ, ալվան ծաղիկ, իմ նանիկ.<sup>2)</sup>

— Սազդ վեր դիր թվանք առ,  
 Գնա ընկիր սար ու քար,  
 Թառլան տղայ, չինար տղայ, ջան տղայ,<sup>1)</sup>  
 Ի ուշմանի հախիցն արի,  
 Էնչաղ կանեմ քեզ իմ եար.  
 Թառլան տղայ, չինար տղայ, ջան տղայ.<sup>2)</sup>

— Երեսդ վարդ լմանի,  
 Լեզուդ սրտիս բալանի,  
 Եդ թառլանի աչքերդ,  
 Հողիս հաներ կըտանի:

— Շատ սիրուն եմ, ալ վարդ եմ,  
 Մեծ պալատների զարդ եմ,

1—2) Իւրաքանչիւր երկու տողից յետոյ մի տող պէտք է կրկնել:



Էս թառլանի աչօքս,  
Շատ մարդոց կրկխարդեմ:

— Վիզդ մարջան ես կապել,  
Չօլի ջէլրան ես դառել,  
Ինձ հալեցիր-մաշեցիր,  
Հիմէլ ուրիշն ես ճարել:

— Ուրիշը ինձ արժան չէ,  
Դու խօսքդ լաւ ճանանչէ,  
Ես ուրիշին չեմ ճարել,  
Խօսքդ ետ առ—ամանչէ:

— Աչքս երեսդ մնաց,  
Խեւքս գլխիցս գնաց,  
Հէջ խիղճ չունիս քո սիրտը,  
Սիրտս եարալու մնաց:

— Իմ ջանը քեզ հալալ ա,  
Կարմիր թշներս արվալա,  
Կտրիճ տղայ, իմ հոգին,  
Քեզի բաշխեմ հալալ ա:

— Ջահիլ ջահիլ ծերացայ,  
Ախ, քո սիրով էրէցայ,  
Գիշերս էնքան եմ լացել,  
Հլա աչքերս թաց ա:

— Ես մէկ կտրիճ եար կուզեմ,  
Եարս սրտիս ճար կուզեմ,  
Վզիս մարջան քեզ կուտամ,  
Առանց էդ էլ սիրուն եմ:

— Հանդէն կուզաս կերթաս տուն,  
Դու կըմտնես անուշ քուն,  
Աղջի ինձ մենակ թողած,  
Բուերի պէս չուերուն:

— Գիշեր ցերեկ ման արի,  
Թվանք ու խանչալ ճարի,  
Դու շմաններիս ջախջախիր,  
Նոր պարզերես տուն արի:



Ո Ռ Գ Ե Ղ Ը Ն Ի Ն

Պիտի սիրեմ քեզ հայ աղջիկ,  
Պիտի գգուեմ համբուրեմ,  
Ինչպէս փնջիկ ալ վարդերից,  
Գրծքիս կապեմ հոտոտեմ:

Որովհետեւ դու իմ պապի—  
Պարտէզի մէջ ես ծլել,  
Եւ իմ պառաւ Մայր-Արաքսի,  
Անուշ ջրով ես սնուել:

Աննման ես— հրաշագեղ,  
Ներկան քեզ է պատկանում,  
Զկայ ուրիշ ինձ դիւթական,  
Բացի քեզնից աշխարհում:



ՏԻԳՐԱՆ ՅԱԿՈՎԱԲԱՆՆԻ ԵՐԹԱՏՆՎԻՆ

Գարձեալ ընկաւ մի աստղ փայլուն,  
Ո՛հ, անձէր երկնակամարից,  
Քանզ արուսեակ էր շողշողուն,  
Եւ քան պայծառ էր լուսնեակից:

Խաւար սփռեց Եդեսիային,  
Մեծ կորուստը քաջ Տիգրանի,  
Երբ հառաչեց երկնից մի ձայն,  
Ընկաւ աստղը այն հերոսի:

Իա անձնուէր քաջն էր, ընկաւ,  
Ու չքացաւ այս ախշարհից,  
Բայց նա գնաց անդ միացաւ,  
Այն սուրբ գնդերին անմահից:

Զերմ համբոյրով ընդունեցին,  
Իրենց շարքերում հին քաջեր,  
Յանուն ազգի զոհաբերին,  
Զօնելով լուսոյ պսակներ:

Զուր է ողբալ անգին մահը,  
Այժմ վրէժ է պահանջում,



Քէն ու վրէժ ընդ միշտ յաւերժ,  
Երջանիկ է նա այն կեանքում:

Ահա նուէր անմահ քաջին,  
Իվառ սրտէ եղբայրական,  
Նորա փայլուն յիշատակին,  
Թող սա լինի ոսկէ արձան:

ՅԵՒՆԻՓՈՒԿԱՆ ՍԷՐ

Ես պիտի երգեմ սէրն յաւերժական,  
Սէր աշխարհային ամբողջ մարդկութեան,  
Թող ինձ անարգեն, թող միշտ հալածեն,  
Իմ սիրտն ու հոգին սէր պիտի երգեն:

Դու մեծ վիպասան գրիչդ վեր առ,  
Սիրոյ շահերը գրէ անգագար,  
Եւ դու պերճախօս մի լեր եսական,  
Նուիրէ լեզուդ սիրոյ միութեան:

Ո՛վ քաջ զօրավար գէնքերդ շարժէ,  
Սիրոյ թշնամեաց անողոք ջնջէ,  
Ո՛վ կրսերմանէ միշտ ատելութիւն,  
Չքացուր նոցա գարշելի անուն:

Անէ՛ծք թափեցէք այն չարագործին,  
Որ դաւաճանեց խաղաղ ամբոխին,  
Լարեց իրար գէժ, կոտորել կտայ,  
Իսկ ինքը հեռուն կանգնել կըխնդայ:

ՔՆՔՈՒՂ ԱՂԱՆԵԱԿ

Բոլոր սիրտս կոյս իքեզ նուիրեցի  
Կեանքս ու հոգիս զգացմունքս մաշեցի,  
Ա՛խ, քո ձեռից ինչ տանջանքներ քաշեցի.  
Քնքուշ աղաւնեակ, գեղեցիկ տատրակ,  
Եղեմեան սոխակ, համբերելով ճարս կտրաւ,  
Եկ մի պատասխան տուր, երջանիկ ժամերս—  
Անցկացաւ, եկ մի պատասխան տուր,  
Վարդ այտերդ խելքս տարաւ,  
Եկ մի պատասխան տուր: <sup>1)</sup>

Քնքուշ կրկին թերթիկներդ արա բաց,  
Քո լոյս գէժքից շող տուր բիւրաւօր ծաղկանց,  
Արդէն բարի արշալոյսըն է բացուած...

Ինչո՛ւ այդքան անգուլթ եղար-անխնամ,  
Մի ծաղիկ ես հոտով գունով անթառամ,  
Ես եմ, հոգեակ, քեզ անմոռաց բարեկամ...

1) Այս վեց տողը ամեն տան վերջում պէտք է կրկնել:



Թարմ ծաղկանցից քնքուշ փնջեր եմ հիւսել,  
Անկեղծ սրտով սէրս քեզ եմ նուիրել.  
Մատաղ սրտիդ, կեանքս մատաղ եմ ընտրել...

Այգեպան եմ, ման եմ գալիս իմ այգում,  
Մինչ երբ այրուիմ, անի, քո սիրոյ կրակում,  
Թող գէթ մի ժամ հանգստանամ քո գրկում...

ԻՄ ՍԻՐՈՒՆԻՆ

Քնքուշ մատներդ կարկառէ,  
Սրտիս մուժ քողը պատուէ չարդ տանիմ,  
Հանգած ճրագն իմ եկ վառէ.  
Կայքս մատաղ կեանքս մատաղ, { 1)  
Սրտիս սիրածը չարդ տանիմ:

Ես բլբուլ եմ, դու վարդ ծաղիկ,  
Ա՛խ, լալիս եմ մաղիկ մաղիկ, չարդ տանիմ,  
Խղճա կեանքիս հիւրի աղջիկ...

Ջարդարուել ես կը շորորաս,  
Նոճու պէս կանգնել կորորաս, չարդ տանիմ  
Եղել ես գլխիս պատուհաս...

1) Ամեն տան վերջում կրկնել այս երկու տողը:

Շահմար հիւսդ արձակեցիր,  
Նետերը սիրտս խրեցիր, չարդ տանիմ,  
Ողջ մարմինս խոցոտեցիր...

ԸՅՍ ԷԼ ՄԻ ՊԵՏԿԵՐ

Ա՛խ, իմ վէրքերէն արիւնն է ծորում,  
Ընկած եմ անտէր մենակ խոր ձորում,  
Ընկերներ չկան իմ գլխիս վերև,  
Ուժասպառ եղած այրում է արև:

Չորս կողմս վայրի վարդեր են բացուել,  
Բլբուլն է մենակ իր ետը գրկել,  
Հապա իմ ետըս ո՛ւր է որ չի գայ,  
Անտէր գլուխս գրկէ ու ողբա:

Մեր հարս աղջիկներ բռնաբարեցին,  
Հորս տունն ու տեղ հիմքից այրեցին.  
Շարժուիլ չեմ կարող վերաւոր ընկած,  
Կուզեմ լաց լինել, սիրտս է քարացած:

Աչքերիս առաջ աղբիւրն է բխում,  
Սառն անմահական հոսում հեռանում,  
Այրում է հոգիս, բայց չեմ կարենա,  
Գէթ մի ումպ խմեմ սիրտս զովանա:



ՇՐՇՄ ԹՐԷՂԻԿԵՆՆԻ ՅԻԹՇՏԵԿԻՆ

Մեր դարտն էղաւ խոր խոր ձորեր մեծ սարեր,  
 էն ձորերուն մեզ մի ջիւան է պարկեր,  
 Հեռու անտէր էն ջիւանին, էն քաջին,  
 Արծուի թւեր թող հով անեն Արամին:

Մեր սէրն էղաւ նորա սրտին սուր վահան,  
 Մեր սիրտն էղաւ նորան անյայտ գերեզման,  
 Արև, լուսին, դուք չտեսա՞ք էն քաջին,  
 Ա՛խ, ո՛ւր ընկաւ առույգ մարմինն Արամին:

Գարուն կուգայ իր անուշիկ հովերով,  
 Կանցնի կերթա նորա գլխէն ցօղերով,  
 Ել չենք գտնի մեր կորուստը թանկագին,  
 Թող շուշաններ պճնեն շիրիմն Արամին:



ԳԻՄՆԿԵՆՈՐ ԶԵՐՆՅՈՐԹՐ

Յեղափոխութեան պատրուակի տակ,  
 Ինչէր ասես որ դու չգործեցիր,  
 Եւ մեռած խղճով արիւր ոտնատակ,  
 Այդ վսեմ գործը դաւաճանեցիր:

Անարգ խաբէբա, խորամանկ սողուն,  
 Դիմակն երեսիդ եկար շարք մտար,  
 Գու կեղեքեցիր խղճուկ ամբոխին,  
 Եւ կողոպտեցիր գարշ փորիդ համար:

Կեղծ քարոզներով անմեղ սրտերը,  
 Նախանձով լցիր, անգուլթ, անզգամ,  
 Սպանել տուիր եղբայր եղբօրը,  
 Բայց չբզղջացիր դու ոչ մի անգամ:

Ո՛հ հազար ափսոս այդ մարդ անունը,  
 Որ քեզ վերայ ես կրում մշտական,  
 Եւ Աստուածային այն վեհ պատկերը,  
 Որին տեսնում ենք քո մարմնի վերան:

Ինչպէս աղքատի արիւն քրտինքով—  
 Արդար վաստակը քեզ իւրացրիր,



Վստահ երեսով ու հանգիստ սրտով,  
Փարթամ, պանծալի կեանք վայելեցիր:

Ա՛խ, երանի թէ քեզ ճանաչէինք,  
Նախքան մեր շարքում դեռ մուտ չգործած,  
Մի մազդ անգամ երկրից շնջէինք,  
Գարշելի վամբիր — զազիր արարած:

Դո՛ւրս մեր շարքերից, դնա հեռացիր,  
Մեր սուրբ աշխարհից չքացիր իսպառ,  
Քեզ բնակավայր այնտեղ որոշիր,  
Ինչտեղ մարդկային ցեղին է օտար:

Դու արժանի չես պարզ երկնքի տակ,  
Վերջին օրերդ լրացնելու,  
Եւ մաքուր օդում լոյս արևի տակ,  
Զար արարքներդ նստել ողբալու:



Ի Մ Ե Ա Ր Ը

Ամպեր ելան բլուր բլուր,  
Մօտիս սարի կտտարէն,  
Ս՛խ, իմ սիրտը կարօտ մնաց,  
Իմ թառլանէն — իմ եարէն:  
Ա՛խ, թողեց հեռացաւ —  
Ինձ ետրաբ մոռացաւ,  
Մի տարի է որ խապար չուենիմ իմ եարէն,  
Ճամբու գրի մնացի մօրմօքայէն:<sup>1)</sup>

Լուսին չկայ որ մէկ տեսնեմ, —  
Ասեմ ետրիս խապար տար,  
Թէ աստ ինչպէս կտառապիմ,  
Իրայ սիրով չարաչար:

Քանի սարով հեռու գնաց,  
Ազիզ եարս ինձանից,  
Զիկեարս ետրալու մնաց,  
Բեզարել եմ իմ ջանից:

Սպասելով հոգիս ելաւ,  
Գիշերն անքուն ողբալով,  
Զահել ջիւան ջանս մաշաւ,  
Անուշ ետրիս մանգալով:

Ասն տան վերջում կրկնել այս շորս ք որը



ԳՆԱ ԱԼԲՈՒԼ

Գնան բլբուլ, թռիւր գնայ,  
 Էս արճնոտ աշխարհէն,  
 Թռիւր բլբուլ, էլ մի կենայ,  
 Բաժանեցին քեզ վարդէն:

Քո սիրական սիրուն վարդէ,  
 Քամին փչեց չորացուց,  
 Արնով լցրեց վարդարանդ,  
 Այգիներդ փչացուց:

Արդէն եղաւ ագռաւի տեղ,  
 Էստեղ էլ վարդ չի բացւիր,  
 Ձուր մի ողբար խղճուկ բլբուլ,  
 Յաւերդ ա՛ռ հեռացիր:



ԶԷՍԹՈՒՆՑԻՆԵՐ

Զինուած պատրաստուած Զէյթունի քաջեր,  
 Սուրբ ազատութեամբ վառուած անվեհեր,  
 Վրէժով լցուած առիւծի նման,  
 Քաջ քաջ կուռւմ են տաճկի դէմ դաժան:  
 Կեցցէք դուք միշտ Զէյթունցիք,  
 Որ պիտ փրկէք հայրենիք,  
 Քուք հայաստանի պարծանք,  
 Մեր կեանքերն էլ ձեզ կտանք: 1)

Զէյթունի լեռներ արեամբ շաղախուած,  
 Թշնամիներով են շրջապատած,  
 Բայց նորա քաջեր երկիւղ չեն կրում,  
 Այր ու կին մէկտեղ կռիւ են մղում:

Նոքա միշտ կստեն լաւ է ազատ մահ,  
 Քան բռնի ապրել աշխարհի վերայ,  
 Եւ ստրուկ լինել անօրէն տաճկին,  
 Գամ արատ թողնել Հայի անցեալին:

Մանուկն օրօցում աչքերը կապած,  
 Խնդրում է մօրից բազուկներս բաց,  
 Տուր ինձ հրացան և մի սուր զաշույն,  
 Ես կուզեմ ծծել կաթի տեղ արիւն:

1) Ամեն տան վերջը կրկնել այս տուր:



Երեխան կասէ ինչ ես կաշկանդել,  
 Քանզիր ինձ մայրիկ, ես կուզեմ կռուել,  
 Չեմ ուզում հանգիստ ու այս օրօրոց,  
 Երբ իմ եղբարքս կանեն լաց ու կոծ:

ԲԵՆԻՈՐԻ ՎԻՃԿԸ

Խեղճ բանւորի արտասուքն ու քրտինքը,  
 Ծով են դառել քո նաւի տակ կը տքան,  
 Նորա սրտից դուրս վիժող հառաչանքը,  
 Եթերային լուռ խորշերում կը սգան:

Այսքան բողոք, այսքան աղերս լսեցիր—  
 Խեղճ բանւորից, իսկի չազդեց քո սրտին,  
 Քո խաբուսիկ փաղաքշական այն յոյսեր,  
 Հիասթափեց վաղուց իաբուած բանւորին:

Այժմ շուտով կիջնես կարմիր գերեզման,  
 Դու մեծ մարդ ես, սև գերեզման չէ յարմար,  
 Քեզ անյատակ արեան ճահիճն է արժան,  
 Արիւն սիրողն արեան մէջ կառնի դադար:



ՆՈՐ ՀԵՐՈՍՆԵՐ

Թշուառների լաց ու կոծից,  
 Նոր հերոսներ ծնուեցին,  
 Բարձրաթռիչ արծւի նման,  
 Թանձր օդը պատուեցին,  
 Սլանում են սուսերամերկ,  
 Խուճը խուճը եղբարց օգնութեան,  
 Հայրենակէզ, բոցաբորբոք,  
 Մեր սիրելեաց փրկութեան:

Նոքա վսեմ իգէալով,  
 Ուխտեցին մնալ ազգին—  
 Հաւատարիմ - քաջապաշտպան  
 Հայաստանեաց աշխարհին,  
 Հալածելու, ջախջախելու  
 Այն ոխերիմ թշնամեաց,  
 Որ գերեցին, գրաւեցին  
 Առքն ու փառքը հայրենեաց:

Ազգայնական սիրով այլւաճ  
 Քաջամարտիկ զինւորներ,  
 Օրհնեալ լինի ձեր վեհ հոգին  
 Եւ ջլապինդ բազուկներ,



Աստուածային լոյս պսակներ  
Յաւերժական աշխարհից,  
Սուրբ հաւատոյ պահպաններ  
Պիտի ձօնեն ձեզ երկնից:

Թող դիւցազունք զան գունդ իգունդ:  
Ձեր փոխարէն մարտնչել,  
Հրաշողուն սրեր բռնած  
Գոռ թշնամուն խորտակել,  
Հայոց դաշտեր պիտի ծլին  
Ձեր անարատ արիւնով,  
Ձեր շիրիմներ պիտի ծաղկին  
Եղեմական վարդերով:

ԵՐԿՈՒ ԸՌԻԹ

Ռումբները պայթեցին,  
Փոշին երկինք բարձրացաւ,  
Երկու առիւծ միատեղ  
Դաժան մահը գիրկն առաւ,  
Արտաշէս և Խաչատուր  
Անձնանւէր զինուորներ,  
Երկարամաց ընթացքում  
Հազիւ եղան կտրիճներ:

Գործում էին անվեհեր,  
Ազատութեան վառ սիրով,  
Հայրենիքի դարևոր  
Կորած փառքը տենչալով,  
Չարագուշակ այն ժամին  
Երկիր ցնցուեց-դզրդաց,  
Ընկան երկու վառ աստղեր,  
Կորան ընդ միշտ և անդարձ:

Երբ հայ ազգը կրգտնի  
Իւր փառքն ու ազատութիւն,  
Յայնժամ նոքա պիտ առնին  
Իմահուանէ յարութիւն,  
Բայց մենք այժմ մեր կրծքին  
Նորանց քաղցր լիշատակ —  
Պիտի պահենք անմոռաց,  
Որպէս գափնահիւս պսակ:





Թ Յ Ո Ւ Ը Ռ Ն Ե Ր

Ձմեռն եկաւ. այն թշուառներ կողոպտած,  
Մնացել են անտուն անտէր մերկ քաղցած,  
Նոքա կուլան ցուրտ ձնապատ դաշտերում,  
Աստուած, միթէ աչքդ նոցա չէ տեսնում.

Թող քարեր լան նոցա ցաւն ու կարիքներ,  
Քանի՛ կոյր են նորանց համար մեր աչքեր:

Ա՛խ մեր սրտեր կարծր են քարից պողպատից,  
Ջլանում ենք լինել նոցա կարեկից,  
Եւ դու անգութ միլիօնատէր վաշխառու,  
Դեռ չես հասնում եղբօրդ արտսունքը սրբելու.

Թող քարեր լան նոցա ցաւն ու կարիքներ,  
Քանի՛ կոյր են նորանց համար մեր աչքեր:



Ե Ր Ո Չ

Մեռած էի՛ հոգիաւրս—  
Դեռ կանգնած էր գլխիս վերև,  
Ո՛հ, լալիս էր խզճուկ մայրս,  
Խաւարած էր իմ լոյս արև:

Մահճակալս ծածկել էին,  
Ու ու թանձր վարագուրով,  
Իմ սև սուգը կարտասուէին,  
Երբօր ներս մտար գողալով:

Գաբրիէլը սարսափահար,  
Հոգիս թողեց երկինք գնաց,  
Ու ես նորից կենդանացայ,  
Տեսայ դու ես ինձ մօտ կանգնած:

Իմ Աստուածս բոլոր փառքով,  
Քո սրտի մէջ է բազմացել,  
Ուրեմն դու միշտ կարող ես,  
Ինձ մեռցնել— յարուցանել:



ՍԻՐՈՒՆ ԱՉԻԿ

Ինչ ես ճեպում շորորալէն,  
 Բորբոքեցիր սրտիս եարէն,  
 Սիրուն աչիկ — հիւրի աղջիկ,  
 Նուշ անուշիկ ինձ այրեցիր —  
 Խորովեցիր:

Կանաչազարդ դաշտով կերթաս,  
 Ծափ նման կը ծլվլաս,  
 Սիրուն աչիկ — հիւրի աղջիկ,  
 Նուշ անուշիկ ինձ այրեցիր —  
 Խորովեցիր:

Քու բլբուլ ես, թէ դեղձանիկ,  
 Որ ճախրում ես այդպէս ճարպիկ,  
 Սիրուն աչիկ հիւրի աղջիկ,  
 Նուշ անուշիկ ինձ այրեցիր —  
 Խորովեցիր:

Էդ մեկանուշ քո երգերով,  
 Սիրտս արիւր ցաւերի ծով,  
 Սիրուն աչիկ — հիւրի աղջիկ,  
 Նուշ անուշիկ ինձ այրեցիր —  
 Խորովեցիր:

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՆՐԳ

Բաւական է ստրկութեան  
 Ովկիանոսի մէջ լողանք,  
 Բաւական է բիւրօկրատին  
 Խոնարհաբար գլուխ տանք,  
 Տանջուած մաշուած իմ եղբայրներ  
 Հետևեցէք դուք նորան,  
 Ով որ կերթա այն շաւիղով  
 Առանց ազգի խտրութեան:

Այն լուսաստղը մեզ է գալիս  
 Բարձր երկնական արից,  
 Դէհ պարզեցէք դրօշակներ  
 Զխուսափինք նորանից,  
 Տեսէք հսկան այն լուսաբեր  
 Արնծովէն դուրս թռած,  
 Աչքերն արցունք, սիրտը խոցոտ  
 Աստղը ձեռքում պինդ բռնած:

Ահա եկաւ հասաւ մեզ մօտ  
 Դիմաւորենք մենք նորան,  
 Նա բանւորն է որ կփշրէ  
 Շղթաները բռնութեան,



Այն փառազարդ պալատները  
 Մեր ձեռքով ենք կառուցել,  
 Այն բարեք որ կվայելեն  
 Մենք ենք ցանկել ու քաղել:

Գիշեր ցերեկ արիւն քրտինք  
 Թափելով շղթա կռենք  
 Այդ մեր կռած շղթաներով  
 Բաւական է մեզ կապենք:  
 Գէ՛հ, հետևենք տանջուած եղբարք,  
 Մեր առաջնորդ բանւորին,  
 Գէ՛հ, շտապենք ժամն է հասել  
 Մեր արիւնը քամողին:

Ս Ի Ր Ո Ւ Ն Ն Ե Ր

Սիրուններ միք նեղանալ,  
 Որ միշտ իմ եարիս եմ գովում,  
 Գուք դարտս չէք իմանալ,  
 Էնտի եարիս եմ գովում,  
 Էնտի փէրիս եմ գովում:

Թէկուզ լինիք աղանեակ,  
 Թւիկներդ լայն բաց արած,

Ճախրելով վեր բարձրանաք,  
 Ելի եարիս եմ գովում,  
 Ելի փէրիս եմ գովում:

Որքան կուզէք զարգարէք,  
 Այլ ու եշիլ գոհարներով,  
 Եարս սև՝ դուք ալ հագէք,  
 Ելի եարիս եմ գովում,  
 Ելի փէրիս եմ գովում:

Թէ որ լինիք սիրամարգ,  
 Ձեր նախշունիկ փետուրներով,  
 Կամ անուշ երգող սոխակ,  
 Ելի եարիս եմ գովում,  
 Ելի փէրիս եմ գովում:

Մագերդ ոսկեթելեր,  
 Ունքերդ նորածին լուսին,  
 Աչքերդ փայլուն աստղեր,  
 Ելի եարիս եմ գովում,  
 Ելի փէրիս եմ գովում:



Ամէքդ մէկ մէկ փէրի,  
 Աչքիս առաջ ման էք գալիս,  
 Բայց ինձ չէք կարող գերի,  
 Էնտի եարիս եմ գովում,  
 Էնտի փէրիս եմ գովում:

Ն Ո Ւ Յ Ե Ղ Ջ Ի Կ

Ձով գիշեր է դուրս եկ լուսնեակը նորել է,  
 Նուշ աղջիկ քո սիրուց հանգիստս կորել է,  
 Էդ չինար հասակդ, իմ խելքս տարել է.

Անուշ եար շուտ արի,  
 Քնքուշ եար շուտ արի,  
 Բոյ ու բուսիդ մատաղ  
 Ձէյրան-ջէյրան-ջէյրան,  
 Մետաքս հիւսիդ մատաղ,  
 Ձէյրան-ջէյրան-ջէյրան:<sup>1)</sup>

Աստղեր կշողշողան կապուտակ երկնքէն,  
 Վառեցիր իմ հոգին քո սև սև աչերէն,  
 Համբերանքս կտրաւ, լալիս եմ քո ձեռքէն...

Ափսոս էս գիշերին, որ մենակ ման կուգամ  
 Կաղաչեմ դուրս չես գայ առանց քեզ ուր գնամ,  
 Թէ հոգիս էլ ուղես, աղիկ ջան քեզ կտամ...

1) Ամեն տան վերջում կրկնել այս վեց տողը:

\*  
 \* \*

Արևը դիպաւ, գունէն դուրս եկար,  
 Քոյրը աշխարհը արիւր շանթահար,  
 Ու նազ անելով անցար գնացիր,  
 Քիւրաւոր սրտեր կրակով լցիր:

Սիրտս լցիր բիւր ցաւերով,  
 Ու հեռացել կերթաս,  
 Ինձ մոռացել կերթաս,  
 Դարձիր մէկ աշէ, մէկ աշէ, մէկ աշէ,  
 Կայնիր մէկ աշէ, մէկ աշէ, մէկ աշէ,  
 Քո սէրն եմ, քո տէրն եմ, զուր չմեռնեմ:

Էդ չքնաղ մարմնիդ էլ ինչ զարդարուել,  
 Երբ արարիչն է քեզի նկարել,  
 Էդ սև աչերդ կրակ կրցայտեն,  
 Ետ մատաղ սրտեր կայրեն—խորովեն:

Սիրտս լցիր բիւր ցաւերով և այլն:





ԲԵՆԻՈՐԻ ՎԵՅԸ

Բողոքենք միշտ ազատ կռուելով ուժգին,  
 Զախջախենք գլուխը թունաւոր օձին,  
 Զնջենք մեր սուրբ երկրից գիւային ոգին,  
 Յոյց տանք ծայրէ իծայր ամբողջ աշխարհին,  
 Թէ մենք էլ կարող ենք ապրել փառքերով,  
 Եւ պճնուել գիտենք փայլուն զարդերով,  
 Պարզենք զրօշակներ, ելնենք գունդ ի գունդ,<sup>1)</sup>  
 Փութանք յառանջ-յառանջ ստրուկ ժողովուրդ: <sup>2)</sup>

Զրկուած ենք մշտապէս ամեն պահանջէն,  
 Որպէս անասուններ մեզ միշտ կտանջեն,  
 Մենք չունինք խօսք լեզու, անմաս-անբաժին,  
 Բաւական է ապրել մէջն այս նեղ որջին,  
 Գուրս գանք միանգամայն անարգ սև կեանքից,  
 Երբէք չըսարսափինք բնական մահից...

Յաղթանակը մօտ է վերջ ու վերջական,  
 Յուսախար չենք լինիլ, մերն է ապագան,  
 Համարտութեան շաւիղն հարթ է ու փայլուն,  
 Մինչ երկինք է հասել բողոքն ու արիւն,  
 Անպատիժ չեն մնալ եղբունագործներ,  
 Արիւնով կըջնջուին արիւնոտ սարեր...

1-2 Ամեն տան վերջում կրկնել այս երկու տողը:

Զ Ր Ի Ն Կ Ե Ր

Ոսկի ժամերդ կորուցիր,  
 Անգին օրերդ թուուցիր,  
 Պիտի մեռնիս դու աննշան,  
 Զրիակեր թշուառական:

Զեղար պիտանի ոչ մէկին,  
 Թմրած մնաց քո խեղճ հոգին,  
 Աշխատանքից հրաժարուար,  
 Ծուլութեանդ գերի եղար:

Դու երբէք իրաւունք չունիս,  
 Մեր վաստակը ուտես ապրիս,  
 Մեր սեզանի փշրանքները,  
 Պէտք է լինի քո բաժինը:

Բաւական է, զգուշացիր,  
 Դէ շտապի մի գործ գտիր,  
 Զափէ ձեռքէ քանդէ շինէ,  
 Ինչ որ մարդուն կըպատկանէ:

Մեծ ես կարծում դու քեզ ու քեզ,  
 Բայց մըջիւնից էլ պզտիկ ես,



Գնահառ մէկ նորան նայի,  
Թէ ինչպէս պաշար կը տանի:

Հպարտ-Հպարտ փոքրիկ մարմնով,  
Աշխատում է միշտ իր չափով,  
Նա սիրում է արգար ջանքով,  
Ուտել ապրել, մեռնել փառքով:

Իսկ դու բնաւ չես մտածում,  
Քո ապագան և ոչ ներկան,  
Պիտի մեռնիս դու աննշան,  
Զրիակեր թշուառական:

ՆԵՐՈՆ — ԶԵՐՈՆ

Արի իրիկնահովին,  
Մէկտեղ էր թանք մեծ արտը,  
Քնինք էն անուշ զովին,  
Մոռնանք աշխրքի դարտը:  
Նազելի ջան-հէյրան ջէյրան,  
Բոյիդ զուրբան սոյիդ զուրբան:

Մարգարոյ են հասկերը,  
Մեզի մարգիք չեն տեսնի,

Կը ծածկեն մեր դարտերը,  
Տէլմօր էն օրը հասնի:  
Նազելի ջան և այլն:

Աթլազ բարձը գլխիդ տակ,  
Մարմար դօշդ բաց արած,  
Տակըտ զանափուղ դօշակ,  
Երեսս դօշիդ դրած:  
Նազելի ջան... և այլն:

Քնինք զարթինք էրնէկ տանք,  
Էս թանկագին գիշերին,  
Անջաղ անուշ օր տեսանք,  
Էրնէկ լուսնի աչքերին:

ԿԵՅՆԻ ՄԷԿ ՈՒՅՐ ԱՆՆՄ

Սև սև աչերիդ զուրբան,  
Երկէն սաչերիդ զուրբան,  
Կայնի մէկ ետը սէյր անեմ,  
Անուշ պաչերիդ զուրբան,  
Կայնի մէկ ետը սէյր անեմ:

Կոկուել ես կերթաս սէյրան,  
Համ թառլան ես համ ջէյրան,



Կայնի մէկ եար սէյր անեմ,  
 Մնացի ջանիդ հէյրան,  
 Կայնի մէկ եար սէյր անեմ:

Բաղը լիքն է վարդերով,  
 Սիրտս լիքն է դարտերով,  
 Կայնի մէկ եար սէյր անեմ,  
 Տնկողցել ես զարդերով,  
 Կայնի մէկ եար սէյր անեմ:

Ելեր ես կերթաս բազար,  
 Բարին մէկ չարն է հազար,  
 Կայնի մէկ եար սէյր անեմ,  
 Աղօթէ չտան նազար,  
 Կայնի մէկ եար սէյր անեմ:



ԻՄ ԸՆԿԵՐԻՆ

Արի մտիւր սրտիս այգին,  
 Վարդեր քաղէ հօտ արա,  
 Ու լաւ դիտէ ամեն կողմդ,  
 Տես ինչ խոր-խոր վերքեր կայ:

Նայիր այնտեղ սրտիս խորքում,  
 Շատրվանը վարդապատ,  
 Ուր իմ փէրին-անուշ փէրին,  
 Լող է տալիս անընդհատ:

Ժայռոտ կուրծքս է սաստիկ ցնցվում,  
 Երբ ինձնից կըհեռանայ,  
 Բայց մահամերձ էլ որ լինիմ,  
 Կրկին կգայ կեանք կտայ:

Այն վարդերը նա է բուսել,  
 Սրտիս քնքուշ վարդերը,  
 Էն վերքերը նա է բացել,  
 Սրտիս խորունկ վերքերը:

Շէն աշխարհը-լէն աշխարհը,  
 Ինձ հանգչելու տեղ չկայ,  
 Խղճուկ երգչիս ազատօրէն,  
 Սէր երգելու տեղ չկայ:



ՅՈՐԴՈՐ ՔԱՋԻՆ

Լոյսը բացուել է, արև բարձրացել,  
Խաւար գիշերից՝ ազատ ենք, ազատ,  
Քանի թշնամին քասն է ընկել,  
Սթափուենք հայի որդիք հարազատ:

Ել չի փչում ցուրտ հիւսիսի քամին,  
Իւր գորշ սոււոցով դէպի մեր աշխարհ,  
Ամփոփենք եղբարք ուժերս միասին,  
Փութանք, զն յառաջ, այնտեղ մարտավայր:

Անվախ, համարձակ, քինալից սրտով,  
Թշնամեաց գնդերն կտորենք — ցրուենք,  
Եւ մեր անարատ ամբիժ արիւնով,  
Այն սրբապղծեալ հողերը մաքրենք:

Բաւ է մրափենք գերթ անասուններ,  
Ծանր լծի տակ զազիր թշնամեաց,  
Դարերից իվեր կաշկանդող շղթան,  
Ցնցենք ու փշրենք յանուս հայրենեաց:

Զարդերի փոխան՝ զէնք պէտք է կրել,  
Պարերի փոխան՝ կռիւ սովորել,

Հրճուանք, սփոփանք մի կողմ շփրտենք,  
Մեր միտքն ու հանճար գործին նուիրենք:

Գործին, այն գործին, որին տենչատանջ,  
Սյրվում են այնտեղ մեր հարազատներ,  
Եւ անհաւասար ուժերի հանդէպ,  
Վեհ, առիւծաբար, կռվում անվեհեր:

Իսկ այժմ, եթէ չհասնենք օգնութեան,  
Մեր կռուող եղբարք թեւ թիկունք չտանք,  
Բնաջինջ կրլնի իսպառ Հայաստան,  
Եւ պիտի կորչինք ընդ միշտ յաւիտեան:





ՁԵՅԹՈՒՆԻ ՔԱՅԼԵՐԿ

Խնդացէք վե՛հ բնութեան զարդեր,  
 Նաշխուն քնքոյ՛ջ ծաղիկներ,  
 Ուրախացէք սիրուն վարդեր,  
 Պայծառ երկնից աստղիկներ...  
 Անառիկ Ձէյթուն իւր անյաղթ քաջերով,  
 Վրէժ է կոչում անվախ առիւծներով:¹)

Երկինքը մեր գլխին պարզուեց,  
 Լացը փոխուեց հրճուանքի,  
 Ստրուկ հայր արգէն ցնցուեց,  
 Ձեռքը մեկնեց նա գէնքի...

Խորհրդաւոր քնից զարթնեց—  
 Հայ պատանին քրտնաթոր,  
 Աչքը բացեց և ինչ տեսաւ  
 Նա, քաջերին զինաւոր...

Ամեն մի հայ պարտք համարեց,  
 Իւր սուրբ գատը պաշտպանել,  
 Ազատ, անկախ ու անվեհեր,  
 Թշնամեաց գէ՛մ մարտնչել:

1) Ամեն տան վերջը կրկնել այս տողերը:

ՅՈՒՍՈՅ ԿԵՆԹԵՂ

Կապտագոյն երկնի շէն կամարի տակ,  
 Երկար ժամերից մի աղօտ լապտեր—  
 Նիրհում է այնտեղ յոյսերով լեցուն,  
 Մարմանդ փայլփլում դարերից իվեր:

Ամենայն գիշեր մի լուսեղէն կառք,  
 Սրարշաւ կգալ այն կանթեղի մօտ,  
 Կրակ է տալիս ու անշէջ պահում,  
 Սպա սլանում դէպ մեծ գահի մօտ:

Այն կառքում բազմած մի վսեմ մարմին,  
 Տխուր հառաչքով կանթեղի մօտից,  
 Հեռանում գնում Աստուծոյ գահին,  
 Բողոքի պատգամ թշուառի կեանքից:

Իսկ Հայաստանի անմահ ոգին է,  
 Հայի անկումից մինչի ժամըս այս,  
 Աստղերի ծոցում յուսոյ կանթեղը,  
 Դեռ պահում է վառ - անշէջ—անվնաս:

Երբ որ հայաստան կործ—աւեր դարձաւ,  
 Թշնամեաց ձեռքից անարդարութեամբ,



Միակ մերկ ոգին երկինք վերացաւ,  
Բողոքում այնտեղ անհուն վեհութեամբ:

Ամեն մի վայրկեան իւր քաղցր հայեացքով,  
Իրտում է անթարթ մեր սուրբ վայրերին,  
Եւ ալեկոծուած ծովերի նման,  
Քէն ու թոյն թափում ոսոխի զլիւին:

Հասել է արդէն ցանկալի ժամը,  
Այն սուրբ բողոքը գտել արձագանք,  
Եւ իւր բարձունքից մի լոյս շողշողեց,  
Խորտակեց լուծը, ջնջեց հեծկլտանք:

Այլևս հայք մեզ՝ ոչ հանգիստ է պէտք,  
Եւ ոչ դադարում մինչև լաւիտեան,  
Մինչև շտեմնենք Մասեաց գագաթին,  
Կարմիր դրօշը սուրբ ազատութեան:



ՅՈՐԴՈՐ ՀԱՅ ՄԱՆԿՏԻՈՅՆ

Կենաց և մահու փողերն հնչեցին,  
Հայ քաջի սրտում հուր բորբոքեցին,  
Մեր եղբարց արեան հոտն ենք հոտոտում,  
Եւ դարձեալ լուծմ դարձեալ համբերում:  
Մենք մեզ ենք խաբում:

Երբ մեր դարևոր գագան թշնամին,  
Բացած բերանը գարշ դժոխային,  
Ուզում է իսպառ ջնջել կլանել...  
Այս ճգնաժամին էլ ինչ համբերել,  
Եւ ո՛ւմ սպասել:

Ով որ կըցանկայ միշտ անմահ լինել,  
Ահա ասպարէզ, պէտք է շտապել,  
Սուր ու հրացան իւր ձեռքում բռնած,  
Թող փութայ այնտեղ՝ վրէժով լցուած,  
Վախկոտն է քնած:

Ժլատ վաշխառուն անգոյն—անզգայ,  
Դեռ ծիծաղում է սուրբ գործի վերայ,



Հեշտասէր, մորի—տոփանքի օրդին,  
Գարձեալ չէ ուզում օգնել իւր ազգին,  
Բազմել է գահին:

Էլ ո՞ր աւուր ես կտրիճ տղամարդ,  
Պահել այդ ձեռքդ առօրգ ու զուարթ,  
Պինդ-պինդ բազուկներդ երկաթի նման,  
Որ չես հասնելու ազգիդ փրկութեան.  
Կլնիս դաւաճան:

Բայց մենք ամենքս, երբ որ կրկնինք—  
Անձնուէր, անվախ, ինչպէս Անդրանիկ,  
Պարեր ու քարեր ոտքի տակ առած,  
Յայնժամ կրտսնենք փրկանքն հայրենեաց,  
Մեր վերքը բուժուած:



ՀՈՅՐԵՎԵՆ ԽՐԵՏ

Պէտք է միանալ անպայման,  
Լինել մէկ սիրտ, մի հօգի,  
Սա է միակ ազատութեան,  
Արդար ուղին հայ ազգի:

Թողնել քէն ու գարշելի ոխ,  
Մեր կործանիչ աւարկան,  
Որ աւերեց մեր տուն ու բուն,  
Քարքանդ արեց Հայաստան:

Մինչ երբ արգեօք այս ատելի—  
Գողոզ «ես»ը մեզ պատէ,  
Եղբայր եղբօր, քոյրը քրոջ—  
Համար դարան պատրաստէ:

Իսէր երեք հարիւր հազար  
Նահատակաց արիւնի,  
Աղերսում եմ ձեզ ծնկաչոք,  
Լինել մէկ սիրտ-մի հօգի:

Օտար ազգեր մեզ անխնայ  
Կոտորում են հալածում,



Միակ նոցա նպատակն է,  
Քսպառ ջնջել հայ անուն:

Ուրեմն մենք պետք է սիրենք,  
Այսուհետ մէկգմէկի,  
Սէրն ու սուրը պիտի լինի —  
Կենաց սիւնը հայ ազգի:

Վ Յ Տ Ա Ղ Ո Յ Ս Ե Ր Գ Ը

Սարերի կարմիր լալաներ,  
Թափէք ձեր կարմիր գոյները,  
Խաս բախչայի սիրուն վարդեր,  
Թող սևնան ձեր թերթիկները:

Լռէ բլբուլ, էլ մի երգիր,  
Սև հաղիր չօլերը գնա,  
Աքաղաղ, դու էլ մի կանչիր,  
Էլ ինձ համար ցերեկ չկայ:

Թողի անտէր իմ տուն ու տեղ,  
Սար ու ձոր ընկել ման կուգամ,  
Տանջուած աղբ ու երամս այնտեղ,  
Ի՛նչպէս նորանց վիշտը չ'լամ:

Անմեղ թիթեռ, շուտ հեռացր,  
Քեզ բաժին կրակ չըմնաց,  
Գնա գլխիդ ճարը գտիր,  
Այրուիլը ինձ է վիճակուած:

Տ Խ Ո Ւ Ր Հ Լ Թ Ո Չ Ը Ն Ք Ն Ե Ր

Աիրում եմ, բայց ինչ է սէրս, Հայրենի՛ք,  
Էլ չեմ կարող սիրել քնքոյշ գեղ աղջիկ.  
Ի՛նչպէս սիրեմ քնքոյշ աղջիկն ու ալ վարդ,  
Երբ ընկնում են անդ եղբարքս հարազատ:

Ի՛նչպէս փնջեմ անուշահոտ ծաղիկներ,  
Ի՛նչպէս հպեմ չքնաղ կուսի շրթունքներ,  
Երկինք, ինչպէս քեզ ողջունեմ առաւօտ,  
Երբ տանջում ես քո նշուլից միշտ կարօտ:

Սիրտս ցաւոտ, հոգիս կուլայ, ես կ'ողբամ,  
Վշտերիս հետ ոլոր-մոլոր ման կ'ուգամ,  
Ի՛նչպէս սիրեմ քնքոյշ աղջիկն ու ալ վարդ,  
Երբ ընկնում են անդ եղբարքս հարազատ:

Էլ ինչ պետք են հրապուրիչ դիւթական,  
Սև աչեր ու սև մագեր հայ աղջրկան,  
Եւ ինչ պետք են թաւշետայբաղմոց ճոխ սեղան,  
Երբ իւր քօյրեր թափառում են մուրացկան:



ԻՐԱՐ ԵՆՔ ԽԱՅԹՈՒՄ

Հոսում են գետերն արցունք ու արիւն,  
Հայոց աշխարհն է դարձել սգոյ տուն,  
Կապառնան ջնջել անդ մեր քաջերուն,  
Իսկ մենք կուրօրէն իրար ենք խայթում:

Աւերեցին մեր քաղաք ու գեղեր,  
Խլեցին մեզնից անմեղ մանուկներ,  
Սև քողով ծածկուեց մեր պայծառ օրեր,  
Իսկ մենք կուրօրէն իրար ենք խայթում:

Մորթեցերձ արին ծերեր պառաւներ,  
Քաշեցին տարան մեր կոյս աղջիկներ,  
Ո՛հ, մեր ճակատին այսքան արատներ...  
Իսկ մենք կուրօրէն իրար ենք խայթում:

Անտուն ու անտէր, ծարաւ ու քաղցած,  
Մեր քոյր ու եղբարք գըռնէ, դուռ ընկած,  
Եղած են բաժին այնտեղ զաղանաց,  
Իսկ մենք կուրօրէն իրար ենք խայթում:

Կարծես երկնքից կրակ է թափուել,  
Այն սուրբ աշխարհը աւիրել-այրել,

Փոխանակ նոցա արցունքը սրբել...  
Իսկ մենք կուրօրէն իրար ենք խայթում:

Արևը խաւար, լուսնեակը աղօտ,  
Լսվում ամեն ժամ հայրենիքից բօթ,  
Անդ մեր թշուառներ օգնութեան կարօտ,  
Իսկ մենք կուրօրէն իրար ենք խայթում:

Ոչ մի օտար ազգ, չէ մեզ պարտական,  
Որ թշուառներին հասնի օգնութեան,  
Եւ ոչ էլ Աստուած իր բարձր գահից,  
Պիտ իջնէ երկիր, ընդ մեր փրկութեան:

Բայց ո՛չ, մենք պէտք է միացած ուժով,  
Միշտ կռիւ մղենք մեր խաչով, սրով,  
Մեր կենաց աստղը ահա սրանով—  
Կարող է փայլել մինչի յաւիտեան:





ԲՈՂՈՔ ԼՈՒՍՆԻ ԴԷՄ

Ուխտեցի այսօր, որ խռով մնամ —  
Քեզանից լուսին, մինչ իմ մահու ժամ,  
Անհաշտ պիտ նայեմ դէմքիդ ամեն օր,  
Ու անուանեմ քեզ յատուկ կեղծաւոր:

Որ դու տեսնում ես ամեն չարութիւն,  
Արիւն արցունք աչքերովդ արթուն,  
Լաց ու կոծ, կական լսում ականջով,  
Լուռ հեռանում ես — փախչում շտապով:

Ո՛ւր ես հեռանում, ո՛վ անգութ լուսին,  
Բարի հայեացքով չես դիտում Հային,  
Ամենայն գաղտնեաց որ միշտ ներկայ ես,  
Սական թշուառից դէմքդ կրծածկես:

Ի՛նչ արեան գետեր քո աչքի տակից —  
Չեն հոսել արգեօք թշուառի մարմնից,  
Որքան աղաղակ, խորին հառաչանք,  
Եւ որքան կսկիծ, տանջանք տառապանք:

Տեսնում ու լսում, կարծես հրճում ես,  
Կամ բռնակալից՝ իսկ երկնչում ես...  
Եւ կամ կաշառուել զօրեղ ազգերից,  
Որ հեռացնում ես լոյսդ Հայերից:

Ք Ր Ո Ջ Ո Ղ Ի Ջ

Փթթում ծաղկունք փնջիկ-մնջիկ,  
Այգեան շաղեր թերթերուն,  
Գոհարացօլ մանտրիկ-մընտրիկ,  
Շողշողում են կրծքերուն:

Թարմ զեփիւռը հովհարելով,  
Օրօրում է-փայփայում,  
Կաթիլ-կաթիլ անուշ ցօղով,  
Մեղմիկ-մեղմիկ գորովում:

Վարդ մանուշակ, մեխակ, շուշան,  
Գոյն-գոյն փթթած պարտիզում,  
Հովն ու զովը յուշիկ-յուշիկ,  
Թփերի մէջ սօսափում:

Այս ծաղկանցից փնջեր հիւսեմ,  
Օճեմ աղի արցունքով,  
Տանեմ շիրմին փառք պսակեմ,  
Ազգին զոհուած իմ եղբօր:

Որ նուիրեց մատաղ կեանքը,  
Ի՛եռաբողբոջ-կիսաբաց...  
Ի՛ւր փայփայած գաղափարին,  
Ա՛խ, եղբայրս զոհ գնաց:



ԹՈՒՄԸՆԻ ԽՄԻԻ ԿՈՑՈՐԹԻ ԸԹԹԻՐ

Թորկեց լըմէն ուր առքն աւ փառք»  
Կուգէր մզիկ օգնութեան,  
Խոգին իխոց, ուր սիրտ կրակ,  
Կտրիճներ խետ քաջ Թուժան:

Գուժան պատեց մըր էրկըրին,  
Օրթէ լիմցանք սև խապար,  
էն կտրիճներ լըմէն ընկան,  
Վահխ, մըր արևն է խաւար:

Ախ, մըր սրտէն արուն կիգայ,  
Մկա մացինք բէգուժան,  
Սասուն նստեր, անտէր գիլայ,  
Խաւքեր լէ մըր կու սըգան:

Խայու խաչն ու խայու խաւատ,  
Դօր ա մացեր ձըր զօրքնի.  
Օր լըմէն ազգ կիտան մըր ջարդ,  
Գուք խաւարի չըք խասնի:

Որսորդն ընկաւ արուն քամեց,  
Մըր աչքերէն մըր սրտէն,

էն տէր Խազար կրակ ցանեց —  
Խորվեց մըրկի էն օրէն:

Խայ կտրիճներ օրթէ մոռնան,  
Գուժանի էս արարքներ,  
Թըր լաւիտեան հէսիր մնան,  
Սև ընցնի ուրանց օրեր:

\*  
\* \*

Արգեօք ո՛ւր ես իմ նազելի,  
Եւ ո՛ւրտեղ ես գու քնած,  
Որ չես լսում աղաղակս,  
Թողել ես ինձ շուարած:

Ո՛ւր ես, երազով ինձ ցոյց տուր,  
Արթացնեմ երգերով,  
Տեսնիս թէ, սրքան եմ տանջվում,  
Քո սուրբ սիրոյ վէրքերով:

Ջարթիր, զարթիր, իմ նազելի,  
Է՛ր ննջես անուշ քնով,  
Քիչ էլ հանգիստ խղճալոյս տուր,  
Ես էլ հանգչիմ քո գրկով:

Այս աշխարհում բացի քեզնից,  
Ոչինչ չունիմ սփոփանք,  
Միայն դո՛ւ ես, դո՛ւ ինձ համար,  
Թէ մահ տուող և թէ կեանք:



\*  
\* \*

Երբ որ արևն ամպի տակից,  
Գուրս է գալիս շողալով,  
Իմ նազելու աչքերի դէմ,  
Վանգնում է գողգողալով:

Խոնարհանում է լուսինը,  
Նրա ճակատը տեսնելիս,  
Իր նուրբ արծաթափայլ գոյնը,  
Խաւարում է նայելիս:

Թուի ունքերը գեղանկար,  
Շանթող նիզակների պէս,  
Ինչ խոր խփեց, մինչ իմ վաղձան,  
Գուրս պիտ չգան իմ սրտէս:

\*  
\* \*

Վարդ, ինչո՞ւ չես խղճում ինձ,  
Սիրտս լցիր վիշտ — թախիճ,  
Ինչո՞ւ չես ուզում բացուել,  
Երբ քեզ հոգով եմ սիրել:

Վայրկենական չը կարծես,  
Մինչ վերջ պիտի սիրեմ քեզ,  
Բացուէր, բուրբ անուշ հոտ,  
Թող լիանայ իմ կարօտ:

Արի, անուշ նազելի,  
Թոյլ տուր տերևդ բացուի,  
Գէթ մի անգամ կը տեսնեմ,  
Յայնժամ հոգ չէ, թող մեռնեմ:

Ինչքան երգեմ, ինչքան լամ,  
Վարդ, չես մնայ անթառամ,  
Պէտքէ մի օր թառամիս,  
Բայց ինձ կարօտ կը թողնիս:

### ՎԱՂՈՅԻ ՅԵՅՏԵԿԻՆ

Թողեց նա իւր խաղաղ կեանքը,  
Հայրենիքին նուիրուեց,  
Նա բաժանուեց մեր սրտերից,  
Սզգի սիրոյն զոհ բերուեց:

Զէնք վեր առած հերոսաբար,  
Փութաց օգնել իւր եղբարց,



Շտապում էր դէպի Սասուն,  
Քէն ու վրէժով լցուած:

Նա իւր անբիծ արեան գնով —  
Յանկաց փրկել հայրենիք,  
Բայց շատ աւաղ, ջահել կեանքը,  
Շուտ խլեցին թշնամիք...:

Օրհնենք նորա յիշատակը —  
Եղեմական վեհ հոգին,  
Որ ընծայեց առատօրէն,  
Անուշ կեանքը իւր ազգին:

### ԱԻԵՐՈՒՄՆ ԼՅՅՐԵՆԻՔԻ

Ու ամպերը Հայոց երկինք պատեցին,  
Պայծառ արևն ու լուսինը ծածկեցին,  
Աստղերն ընկան երկնից երկիր չքացան,  
Նստել անտէր՝ արիւն կուլայ Հայաստան:

Կայծակ խփեց այրեց սրբավայրերը,  
Հայապատկան գեղատեսիլ գաշտերը,  
Արծաթափայլ գետերն ամեն սևացան,  
Նստել անտէր՝ արիւն կուլայ Հայաստան:

Ովկիանոսն էլ ալեկոծուած կատաղի,  
Կլանում է, խղճուկ հալը ո՛ր փախչի,  
Ոչ լոյս մնաց, ոչ ապաստան ոչ պաշտպան,  
Նստել անտէր՝ արիւն կուլայ Հայաստան:

Էլ մենք արդեօք ինչո՞ւ կասենք հայրենիք,  
Որ ամեն ժամ թշնամեաց դէմ չըկուռինք,  
Պէտք է կռուել, կամ չքանալ լաւիտեան,  
Կամ ազատել գերութիւնից Հայաստան:

\*  
\* \*

Բիւր-բիւր ցաւեր մեր սրտերը —  
Կրճում են ու կտրատում,  
Բազմացան մեր դահիճները,  
Օտարք երբէք չեն խղճում:

Լաց ու կոծը մեզ չի փրկի,  
Որքան էլ որ դառ ողբերք,  
Թշուառին տէր ո՞վ կըլինի,  
Ոչ ոք, գէնքն է մեր փրկանք:

Խաչը խաչին հալածում է,  
Լուսինը նայում զարմացած,



Զօրեղն անգորին ջնջում է,  
Ինչպէս գազան կատաղած:

Միթէ կեղծ է մեր հաւատը,  
Եւ օրէնքը անարդար,  
Միթէ բաւ չէ մեր տանջանքը,  
Որ տանջուեցինք այսքան դար:

Ահա խըլում են ամեն բան,  
Էլ մեզ ոչինչ չըթողին,  
Ով տէր Աստուած, Դու էլ արդեօք,  
Տէր չես լինում թշուառին:

\*  
\* \*

Կոկոն վարդերի նման,  
Բացվում ես դու սնպայման,  
Քեզ համար շատ սոխակներ,  
Գիշեր ցերեկ կը օղբան:

Արևի պէս փալլումես,  
Մատաղ սրտեր այրումես,  
Ով քեզ սրտով է սիրում,  
Նրան էլ տոչորում ես:

Երկու աստղեր երկնային,  
Յօլում են քու երեսին,  
Աղեղ ունքերիդ տակից,  
Շանթհարում են իմ սրտին:

Տուր ինձ պատանդ՝ մի համբոյր,  
Աչերիցդ այդ տխուր,  
Թող սրտիս մէջ վառ մնայ,  
Յիշատակ—ինչպէս մի հուր:



\*  
\* \*

Քանի աստղերը շողշողան,  
Կրակոտ աչերդ եմ լիշում,  
Քանի ամպերը որոտան,  
Ախ ու հառաչանքդ եմ լիշում:

Երբ լուսինը շրջափակուի,  
Տխուր դէմքդ եմ մտաբերում,



Քանի անձրևը կաթկաթի,  
Անկեղծ արտասուենքդ եմ լիշում:

Մայիս ամսի առաւօտը,  
Թէ պարզ լինի արևազարդ,  
Թէ ներշնչէ մաքուր օդը,  
Քո մեղմիկ շունչդ եմ համարում:

Հոգևոյս հատոր, որը մոռնամ,  
Ո՛րը լիշեմ, ես չը գիտեմ,  
Ամեն ըոպէ ամեն վայրկեան,  
Միակ քո սուրբ սէրդ եմ լիշում:

\*  
\* \*

Երբոր դու ինձ չես սիրում,  
Ո՛ւր երեսդ ցոյց կտաս,  
Ես որ մեռայ, իմ հոգեակ,  
Արդեօք ինչ շահ կունենաս:

Աղերսելով խնդրում եմ,  
Խղճան, հոգիս հանեցիր,  
Այդ կրակոտ աչերէդ,  
Սիրտս բոցելով լցիր:

Այսքան անձրև ժայռերին,  
Եթէ թափուէր երկնքից,  
Անշուշտ կը փափկանային,  
Որոնք պինդ են պողպատից:

Այսքան տարուայ արցունքս,  
Չը փափկացնուց քո սիրտը,  
Ի՛նչ անգուլթ ես, սիրուն կոյս,  
Կտրատում ես իմ սիրտը:

Կայծակ խփեց քարերին,  
Բոցով լցրեց սար ու ձոր,  
Դուն էլ կայծակ մի լինելը,  
Ես տկար եմ ու անզօր:

Լաւ է աչքս չը տեսնի,  
Քո կախարդող պատկերդ,  
Ամեն ժամ, ամեն վայրկեան,  
Չը վառեն ինձ աչերդ:

Ի՛նչ պէտքէ այն ծաղիկը,  
Որ հոտ չունի և ոչ համ,  
Ի՛նչ պէտքէ այն սիրուհին,  
Որ անգուլթ է—անխնամ:



\* \* \*

Եկաւ անուշ գարունը,  
Հանդ է գնում սիրունը,  
Նորա գրաւիչ դէմքը,  
Պղտորեց իմ արիւնը:

Յօղում է մեղմիկ անձրև,  
Վարդը բացեց իր տերև,  
Սևաչեայ չքնաղ կոյսը,  
Ինձ չը տուեց մի բարև:

Գլկլում է առուակը,  
Փայլում է արեգակը,  
Ճախրում է դէպի երկինք,  
Իմ խօսող աղանեսակը:

Նստաւ սարի գագաթին,  
Սփռեց մազերը կուրծքին,  
Ինձ նման սիրող սիրտը,  
Գցեց ծովի յատակին:



### ԱՂԲԷՐ ԶԱՆ, ՔԵՉ ՂՈՒՐԲԱՆ

Ալ ու ալուան ես հագել,  
Կարմիր լալա ես դառել,  
Սիւրէի կլոր մէջքդ—  
Փամփուշտներով ես ծածկել...  
Աղբէր ջան, քեզ Ղուրբան,<sup>1)</sup>  
Մեր գիւման, դու ես դու:<sup>2)</sup>

Մէջքդ կապել ես խանչալ,  
Գաստէն նաշխած է խալ խալ,  
Կաթիդ, խանչալիդ մատաղ,  
Քո կերած կաթն է հալալ...

Ձեռքդ թըլանք ես առել,  
Գուշմանի դէմը կալնել,  
Ինձ ասս, գլխիդ մատաղ,  
Բիւնիչըդ ո՛վ է կարել...

Առիւծի պէս կալնել ես,  
Պետերդ ոլորել ես,  
Սև թաւ պետերիդ մատաղ,  
Յաղթանակդ առել ես...

1-2 Ըմեն տան վերջը կրկնել այս սուղերը:



Սիրտս կրակով լցիք—  
Վրէժով բորբոքեցիք,  
Ազիզ բուր ու տխարտանք,  
Ահա թուրս, օրհնեցէք...

ՄՕՐ ԻՂՁԵՐԸ

Մեռնիմ էդ բօլիդ բուսիդ,  
Բազըր լուսին երեսիդ,  
Վեր կաց իմ ազիզ բալէս,  
Հասիր, փրկէ խեղճ ազգիդ:

Ձէնքերդ, ձիդ պատրաստ են,  
Եղբարքդ քեզ կապտեն,  
Ի՞նչ ես քնել անվրդով,  
Գետերն արիւն կը հոսեն:

Արդէն հասակդ ես առել,  
Հսկայ հերօս ես գառել,  
Չքնազագեղ հայ կուսանք,  
Քեզ պսակ են պատրաստել:

Քեզ արժան է լոյս պսակ,  
Կայսերական գահ ու թագ,

Թուիր դու շուտ կռուի դաշտ,

Ազատարար հրեշտակ:

Այս է ժամը քաջութեան,  
Կամ մահ, կամ կեանք հայութեան,  
Ահա, առ քեզ այս սուրը,  
Գէհ շուտ հասիր Հայաստան:

ՀԵՑ ԵՐԻՏՆԱՆԵՐԻՆ

Թիկունքդ լայն, թևերդ պինդ,  
Կունքդ ուժեղ զերթ պողպատ,  
Սիրել զիտես, կռուել չիտես,  
Գուն հսկայ երիտասարդ:

Քոյրդ տանուժ են քրքերը,  
Հօրդ արիւնն են ծծում,  
Գու անտարբեր սառն արիւնով,  
Հանգստութիւն ես փնտրում:

Ամօթ ըզքեզ, հազար ամօթ,  
Որ գէնք չունիս քո ձեռին,  
Մինչ եղբարցդ կռուի դաշտում,  
Կոտորում է թշնամին:



Ձեռքդ տո՛ւր ինձ, երգուենք այստեղ,  
Թողնել փառքը աշխարհի,  
Գնանք մեռնենք առիւծաբար,  
Իսէր ճնշուած մեր ազգի:

\*  
\*  
\*

Նաւը սուրաց, ծովը շարժուեց,  
Խաղաղ սիրտս վշտով լցրեց,  
Երջանկութիւնս ինձնից խլեց...  
Իէգը տարաւ իմ սիրուհին,  
Վայ, հազար վայ իմ արեին:<sup>1)</sup>

Սեւ ամպերը ինձ պատեցին,  
Նաւը աչքիցս խլեցին,  
Ինձ սիրուհուց բաժանեցին...

Օգը ծանր է, շունչս կտրաւ,  
Աւանդ գնաց ձեռքէս թռաւ,  
Իմ բաժին աշխարհն աւերաւ...

Ա Ն Ք Ր Ը Ն Ի Կ Ի Ն

Իբրև արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ,  
Թնդացնում երկինք գետինք տենչավառ,  
Սուրբ անունդ պէտք է լիշուի դարէդար,  
Հսկայ լերինք քեզ ապաստան, Անդրանիկ:

Քուրդ ու տաճիկ երբ լսեն քո անունը,  
Օձերի պէս պիտ սողան իրանց բոյնը,  
Երակներիդ ազնիւ քաջի արիւնը —  
Չը ցամաքի մինչ յաւիտեան, Անդրանիկ:

Հայոց կուսանք զափնեալ պսակ թող հիւսեն,  
Քնքոյշ ձեռամբ քո ճակատը պսակեն,  
Գոհարներով անվախ կուրծքդ զարդարեն,  
Կեցցես յաւէտ դու անսասան, Անդրանիկ:

Հայաստանի սոխակները քեզ համար,  
Թող դալլալեն գիշեր ցերեկ անդադար,  
Անյաղթ մնաս դու քնջ, կուռի սիրահար,  
Հայրենիքին տէր ու պաշտպան, Անդրանիկ:



1—2 Ամեն տան վերջում կրկին այս երկու տողը:



ՆՈՒՆԻ ՔԱՋ ԲԱՐԳԷՆԻՆ

Թուաւ քաջը ամպերի մէջ,  
 Գէպ հայրենիք սլացաւ,  
 Ազատութեան տենչով այրուած,  
 Մարտի վայրը նետուեցաւ:  
 Պայծառ աստղեր խոնարհեցան,  
 Գիծաւորել հերոսին,  
 Ողջունեցին հսկայական  
 Վեհ թռիչքը Բարգէնին:

Ինչպէս ովկեան ալեկոծուած,  
 Որպէս առիւծ վշտահար,  
 Նա դուրս ցատկեց զերթ փոթորիկ,  
 Մռնչալով քաջաբար:  
 Սէրը սրտում, սուրը ձեռքում,  
 Հաւատարիմ իւր ուխտին,  
 Երկնից գունդ գունդ հրեշտակներ,  
 Խնկարկեցին Բարգէնին:

Ծաղկափթիթ անտառներում,  
 Թող ճուղիներ թռչնակներ,  
 Գովեն, գգուեն քաջ Բարգէնին,  
 Ընդ միասին իւր քաջեր:

Որ գէմ գրեց ժայռի նման,  
 Առոյգ կուրծքը թշնամուն,  
 Վայրկենապէս կրակ թափեց,  
 Վրանները թուրքերուն:

Արծուից երամք զմայլեցան,  
 Գետն ընթացքը մարմանդեց,  
 Երբ հերոսը արգարութեան,  
 Որոտաց, սուրը շարժեց:  
 Նա որոտաց ամպի-նման,  
 Իւր անվեհեր քաջերին,  
 Արիւն, վրէժ բռնակալին,  
 Ազատութիւն թշուառին:

\* \* \*

Սիրելուցս չեկաւ նամակ,  
 Տխուր եմ, չ'լամ, ինչ անեմ,  
 Մնացել եմ աստ միայնակ,  
 Տխուր եմ չ'լամ, ինչ անեմ,  
 Իմ դարտերս ո՛ւմ պատմեմ:

Նորան թողի հեռու աշխարհ,  
 Լոյս օրերս կանցնին խաւար,



Նա էլ է տանջվում չարաչար...  
 Տխուր եմ չ'լամ ինչ անեմ,  
 Իմ դարտերս ո՛ւմ պատմեմ:

Թէ և սիրտս իւր մօտ թողի,  
 Բայց մարմնույս աչքը չի տեսնի,  
 Նորան ոչ ոք չի նմանի...  
 Տխուր եմ չ'լամ ինչ անեմ,  
 Իմ դարտերս ո՛ւմ պատմեմ:

Պիցուհի է նա խկապէս,  
 Սէրը դուրս է գալու սրտէս,  
 Հայի աղջիկ է պարզերես...  
 Տխուր եմ չ'լամ ինչ անեմ,  
 Իմ դարտերս ո՛ւմ պատմեմ:



\*\*\*

Մի դեղեցիկ պատահեցաւ ինձ յանկարծ,  
 Ձը հասկացայ ինչ ցեղից էր նա ծնուած,  
 Անսուր մորթեց, առանց կրակ խորվեց ինձ,  
 Խաղաղ սիրտ ու հոգիս արաւ խոցալից:  
 Ուր — մուր մնացի,  
 Արիւն արցունք թափեցի,  
 Այնպէս հրեշտակ տեսայ,  
 Բայց աւանդ շուտ զրկուեցայ: } 1

Սուր — սուր նետեր սրտիս խփեց ու թռաւ,  
 Հէնց այն օրից լոյս արևս խաւարաւ,  
 Էլ ո՛ւր փնտուեմ, ո՞րտեղից գտնեմ նորան,  
 Որ իւր ձեռքով նա ինձ գնէ գերեզման:

Ձը գիտեմ թէ, նա օդի մէջ սլացաւ,  
 Թէ մի հրեշտակ էր, երկինք վերացաւ,  
 Գուցէ տեսայ երազիս մէջ ես նորան,  
 Որ խոստացաւ լինել սրտով սիրեկան:



1) Ամեն տան վերջում կրկինէլ այս շորս տողը:



ՊԵՏՔԻ ԶԷ ԼՈՒՆԼ

Մեզ պէտք է կռուել և ոչ լաց լինել,  
 Ազգի կորուստը զենքով լետ խլել,  
 Այսքան դար լացինք, ո՞վ է լսողը,  
 Մեզ ինչ շահ բերեց արցունքի ցողը:

Այլ ևս չլանք և ոչ սուգ անենք,  
 Կրակուած սրտով մեր գործը վարենք,  
 Անվեհեր քաջին՝ այս է պատկանում,  
 Միշտ ազատ մեռնել կռուի լայն դաշտում:

Անէծք այն հօրը՝ չի մղում որդուն,  
 Որ ազգի սիրուն թափէ նա արիւն,  
 Անէծք այն հային և բիւր նախատինք,  
 Ով ազգի համար չի գործում բարեք:

Մոլի ու երկչոտ տաճիկը թող լայ,  
 Երբ հայ քաջի դէմ կռիւ գուրս կգայ,  
 Մենք վախեցող չենք տանջանքի բովից,  
 Եւ դաժան թուրքի մահ ու գնտակից:



ՍԷՐ ԵՒ ՄԻՈՒԹԻՒՆ

Եթէ կամինք փրկել թշուառ հայրենիք,  
 Նախ պիտ կապենք իրար մեր սիրտ ու հօգիք:  
 Եթէ կամինք մեր անցեալ փառքը գտնել,  
 Հարկաւոր չէ կուսակցութեան բաժանուել...

Արիք եղբարք միանանք,  
 Բաւ համարենք մեր տանջանք,  
 Իսէր ճնշուած խեղճ ազգի,  
 Գործ դնենք մեր ճիգ ու ջանք: <sup>1)</sup>

Մենք Հնչակեան, եղբարք, դուք Գաշակցական,  
 Մենք երկուքս էլ կուլանք վիշտը հայկական,  
 Արիք վճռենք հօգով, սրտով միանանք...  
 Ձեռք ձեռքի տանք, ապա գործենք արշաւանք:

Բաւական է չար ոգիներ մեզ խաբեն,  
 Մեր սրտերը չար նախանձով կաշկանդեն,  
 Քանդենք, փշրենք ոխերով լի սև շղթան.  
 Որ փակել է ճանապարհը փրկութեան...

Մեր պապերն էլ ներկայիս պէս գործեցին,  
 Որ մեր տունը իւրեանց ձեռքով քանդեցին,  
 Օտարների սին փառքերից շլացան,  
 Մատնեցին մեզ մինչև այժմ գերութեան...

1) Ամեն տան վերջում կրկնել այս շարս տողը:



Մի նպատակ և մի վսեմ գաղափար,  
 Մեզ կսպասէ անհամբեր ու անդադար,  
 Ուխտենք եղբարք, յայտնենք մեր սուրբ միու-  
 թիւն  
 Միութիւնով պէտք է գտնել փրկութիւն...

ԽՐԱԽՈՅՍ ՔԱՋԵՐԻՆ

Զմեռն անցկացաւ, գարուն է արդէն,  
 Ծաղկունք բացուեցան, բլբուլք թող երգեն,  
 Հայոց քաջերին՝ ժամ է հարսանեաց,  
 Ահեղ պատերազմի ձայնը որստաց...  
 Զէնքի շաչիւնէն թնդում է երկիր,  
 Հերոս, հայրենիքիդ օգնութեան հասիր: <sup>1)</sup>

Ծաղկեցան այգիք, ծաղկեցան դաշտեր,  
 Վրէժ գոչեցէք անվախ հայ քաջեր,  
 Ժայռեր թող դողան, քարեր պատառին,  
 Շուն քուրդ ու տաճիկներ ո՛ւր պիտի փախչին...

Քանի դարերի ծանր շղթաներ,  
 Այժմ կըփշրեն մեր վեհ հերոսներ,  
 Իսկ դուք դաւաճանք, ո՛ւր պիտի կորչիք,  
 Որ մեր կտրիճների սրից ազատուիք...

1) Ամեն տան վերջում կրկնել այս տողերը:

ԱՐԴԱՐԱՑԻ ԲՈՂՈՔ

Լուռ ու մունջ նստած, երկինք եմ նայում,  
 Սև ու սուգ զրկած, ողբում արտասուում,  
 Տխուր դաշտի մէջ, չորս կողմս ընկած, —  
 Ուռը դիակներ արիւնով պատած...

Վրէժ մեր դահճին. կարծես ռխալից,  
 Հասնում ականջիս նոցա բերանից.  
 Անվերջ ես նոցա բողոքն եմ լսում,  
 Աչքէս արնժեռ արտասուք թափում:

Պատառուիր երկինք, հուր ու բոց թափիր.  
 Անողոք ազգաց արմատից լափիր,  
 Տրաքուիր երկիր, թող զայ երևան —  
 Քեզանում պահուած գաղտնիք չարութեան:

Ի՞նչ էք լուռ դիտում դուք լուսնին աստղեր,  
 Դուք մոռացել էք հայոց արքաներ.  
 Եր չէք վկայում դուք ողջ աշխարհին,  
 Որ երբեմն Հայք էլ մեծ փառք ունէին:

Օ՛հ, ամպ դառնայի, վերնայի երկինք,  
 Կայծակ թափէի այրել թշնամիք,  
 Քանդէի աշխարհ — ջնջել չարութիւն,  
 Ջնջէի դաժան բռնապետութիւն:



ՀնՁԵԿԻ ԳՈՅՈՒԹԵՆ ՄԹԹԻ

Տասրն և հինգ տարիդ արդէն լրացաւ,  
Արձազանքդ ողջ աշխարհ տարածուեցաւ,  
Թմրած ազգդ խոր քնից սթափուեցաւ,  
Հարթ է ճանապարհդ, սիրելի Հնչակ:

Եւրոպ ու Ասիա ձայն արձակեցիր,  
Պաղ սրտերը կրակներով լցուցիր,  
Մուլթ աշխարհից դու մեզի լոյս հանեցիր,  
Լուրջ է գաղափարդ, գովելի Հնչակ:

Ո՛րքան քաջերդ բարձրացան կախազան —  
Իւրեանց կամօք, իսէր յեղափոխութեան,  
Էլ չի մեռնի հալ անուներ յաւիտեան,  
Սուրբ է նպատակդ, պաշտելի Հնչակ:

Դու հնչեցիր ազատութեան անուներ,  
Եղար հայի լոյսը, նեցուկը-սիւներ,  
Խանգարեցիր գաժան Սուլթանի քունը,  
Կտանաս պրակդ, փարելի Հնչակ:

Վրէժ գոչելը նախ դու ստեղծեցիր,  
Թշնամեաց դէմ անվախ կռիւ մղեցիր,

Հալ քաջերին թուրքերի դէմ լարեցիր,  
Պատարուեց բաղձանքդ. յարգելի Հնչակ:

Տասրն և հինգ ամեակդ շնորհաւոր,  
Նուիրեցիր մեզ գաղափար փառաւոր,  
Աղօթում ենք քեզ համար գիշեր ու զօր,  
Վե՛հ մնալ պատիւդ, պանծալի Հնչակ:

\*  
\*\*

Մագերիցդ տուր քնարիս լար հիւսեմ,  
Մատներիս տակ թող մըմնջալ քո սէրդ,  
Լոյս պատկերդ սրտիս մէջը նկարեմ,  
Վառ սիրով նուագեմ սև սև ունքերդ:  
Էդ սև աչերդ, էդ սև ունքերդ,  
Այրում է հոգիս, սիրուն, քո սէրդ:

Սև աչերիդ թող տուր միշտ դէսլ ինձ նայեն,  
Ինձ ինչ պէտքէ պալծառ արևի լոյսը,  
Եթէ թողնես շրթունքներդ համբուրեմ,  
Էլ չեմ ուզեր կարմիր վարդերի բոյսը:  
Էդ սև աչերդ, էդ սև ունքերդ,  
Այրում է հոգիս, սիրուն, քո սէրդ:

Ծովը ընկել կը խեղդուիմ սիրուհիս,  
Մակույկ եղիր, շուտ հասիր ինձ օգնութեան,  
Կրակն ընկել ալրըվում եմ մշտապէս,



Անձրև դարձիր փրկէ անուշ սիրական,  
 Եդ սև աչերդ, էդ սև ունքերդ,  
 Այրում է հոգիս, սիրուն, քո սէրդ:

\*  
 \* \*

Ինձ համար չկայ կեանք, չկայ փառք հիմայ  
 Ա՛խ, տարում եմ մոլոր—շուար ակամայ,  
 Կորուցել եմ կայք ու կալուածքս բոլոր,  
 Մնացել եմ տխուր տրտում սգաւոր:

Ո՛ւր այն արփին, որ փայլում էր իմ գլխին,  
 Ո՛ւր այն աստղը, որ շողում էր երկնային,  
 Ո՛ւր այն սիրտը, որ ինձ սէր էր խոստանում,  
 Ո՛ւր այն հոգին, որ կը խաղար իմ սրտում:

Հիմայ ո՛ւր է այն ծաղիկը պարտիզիս,  
 Որ բացուում էր, լոյս էր տալիս աչերիս,  
 Ո՛ւր կը երգէ այժմ տխակս գեղեցիկ,  
 Եւ ո՛ւր արդեօք բացվում է իմ վարդ ծաղիկ:

Ի՛նչու կորաւ պատկերը չքնաղ կուսին,  
 Որն ամեն ժամ սփոփանք էր իմ սրտին,  
 Ինչո՞ւ թուաւ հրեշտակն իմ փրկութեան,  
 Ու ինձանից հեռացաւ նա յաւիտեան:

ՄՄ ՀԱՄԼԵՌՑԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ով որ լեզրափոխութեան,  
 Մեծ խորհուրդը չգիտէ,  
 Հասկացրէք դուք նորան,  
 Որ սուրբ գործը չպղծէ:  
 Յոյց տուէք լոյս ճանապարհ,  
 Ար նա գործէ սերտ սրտով,  
 Ո՛րն է ազգին փրկարար,  
 Թող զայն սիրէ վառ սիրով:

Մի՛թէ գուգուել-զարդարուել,  
 Վայել է մեր այս օրին,  
 Գոռոգ-փքուած զբօսնել,  
 Տղայք աղջիկ միասին:  
 Նա խարդախ է, դաժան է,  
 Ով սիրուհի է փնտում,  
 Նա կեղծ է դաւաճան է,  
 Ով սիրահար է որոնում:

Այնտեղ տանջանք տառապանք,  
 Մի ճար չկայ փրկուելու,  
 Այստեղ հրճուանք, սփոփանք,  
 Փոխան նոցա զինելու:



Նախ զինեցէք թշուառին,  
 Իւր անձը պաշտպանելու,  
 Հապա իդէս թշնամուն,  
 Շտապեցէք կուռելու:

Մեր սուրբ նահատակների,  
 Արդար անբիծ արիւնը,  
 Թող վրէժխնդիր լինի,  
 Թող ջնջէ այդ անունը:  
 Եւ յանձն առած տառապանք,  
 Սուրբ Հայրենիքն ազատենք,  
 Յետոյ զարդ ու զարդարանք,  
 Սէր ու գգուանք վայելենք:

Ե Ր Ե Խ Ա Յ

Ինձ փայփայիր քնքոյշ մայրիկ,  
 Մի վշտանար դառնագին,  
 Ինձ մի ծեծիր անուշ մայրիկ,  
 Որ չընկճուի իմ հոգին:

Թող որ ազատ ես մեծանամ,  
 Սիրաս ահով մի ծածկիր,  
 Որ չ'դառնամ ես էլ ձեզ պէս,  
 Մի խեղճ ըստրուկ վշտակիր:

Ինձ սովբեցուր զէնքեր շարժել՝  
 Սուր ու գաշոյն, հրացան,

Թէ որ վերաս մէկն յարձակուի,  
 Ուղեղն անեմ ցիր ու ցան:

Խղճուկ հայրս եթէ այդպէս,  
 Զէնքեր շարժել կարենար,  
 Հաւատացիր որ նա արդէն,  
 Ազատութիւն կուեննար:

\* \* \*

Անտառի մէջ նստած մենակ,  
 Խոր վէրքերով, մօտ գետին,  
 Կլկլալով մաքուր գետակ,  
 Սլանում էր դէպ ծովին:

Գարնան քաղցր ժամանակն էր,  
 Ծառեր ծաղկած քնքուշիկ,  
 ձկլալով բիւր թռչուններ,  
 Իմնում իւրեանց հայրենիք:

Տափը ծածկուած կանաչով,  
 Օրօրում էր մեղմ քամին,  
 Ծառ ու կանաչ արմատներով,  
 Երջանիկ պարում էին:



ժամը հասաւ գիշերալին,  
Եզնիկ, այժեամ ձագերով,  
Սմենքն իրանց բոյն գնացին,  
Սար ու քար թռչկոտելով:

Երբ աստղերը երևացին,  
Լուսինն էլ քիչ բարձրացաւ,  
Յիշեցնում էր մէջ գետակին,  
Հայրենիքիս վիշտն ու ցաւ:

Սիրտս լցուաւ, լալիս էի,  
Հեռու տանից ու տեղից,  
Միայնակ ես օտար էի,  
Հեռու—հեռու իմ երկրից:

\* \* \*

Ինչո՞ւ այդպէս անխղճաբար,  
Որսացիր ինձ, անգուլթ որսորդ,  
Կիսամեռ թողիր հեռացար,  
Սլրեցիր սիրտս, անգուլթ որսորդ:

Գոնէ նետդ այնպէս ուղղէիր,  
Որ չանէր ինձ կիսակենդան,  
Ուղիդ կրճքիս մէջ ցցէիր,  
Թող գնէին սև գերեզման:

Անբոյժ վերքս ինձ տանջում է,  
Ծնողքս էլ ինձ մօտ չեն գալիս,  
Բարեկամս էլ հեռանում է,  
Ինձի վերաւոր տեսնելիս:

Արդեօք ինչքան պէտք է մնամ,  
Կսկծալով ու ողբալով,  
Զիտեմ ինչպէս նզովք կարգամ,  
Աղիողորմ արտասուելով:

\* \* \*

Ազատ կեանքս շղթայել եմ իմ ձեռք,  
Մի սիրտ չկայ, որ լսէ իմ լաց—բողոք,  
Բիւր ցաւերով լիացուցի թարմ կեանքս,  
Ա՛խ, ինչ անեմ, չը կատարուեց բաղձանքս:

Շահ չունեցայ բոլորովին ես սիրուց,  
Բացի լացից ու արտասունք թափելուց,  
Միայն ինձ յիշատակ լաց ու կոծ—չիւան,  
Թողեց սրտիս մէջ իմ անգուլթ սիրական:



\* \* \*

Օտարութեան մէջ ես կիսակենդան,  
Ապրում եմ այսպէս, շուրջս է տխրալի,  
Ինձ սփոփանքի չունիմ մի վայրկեան,  
Զկայ ինձ համար ոչինչ ցանկալի:

Նայում եմ շուրջս, օտար ծաղիկներ,  
Ամեն կողմ բացուած, բայց ինձ անհոտ են,  
Ա՛խ, երբ կտեսնեմ մեր երկրի վարդեր,  
Որոնց աչքերս սաստիկ կարօտ են:

Որ վերադառնամ ես իմ հայրենիք,  
Սիրտս մի նոր սէր պիտ զգայ իր մէջ,  
Ինձ ուրախութիւն գալու է սաստիկ,  
Էլ ինձ տխրութիւն չկայ մինչ իմ վերջ:

Զը գիտեմ յայնժամ ես իմ կարօտը,  
Ի՞նչպէս պիտ յայտնեմ այն տերևներին,  
Ի՞նչպէս արցունքիս առատ շիթերը,  
Պէտք է ցօղեմ այն թփերի տակին:



\* \* \*

Մարտ ամսի տասն է, եկան կռուներ,  
Ինձ չը բերին լուր, ախ, սիրտս է տխուր.  
Ապրիլ ամիսն է, կանաչան դաշտեր,  
Այգիս չոր մնաց, ախ սիրտս գնաց:

Մայիս ամսի մէջ ծառեր ծաղկեցան,  
Վարդս չը բացուեց, վերքս չը բուժուեց,  
Եկաւ Յունիսը, շատ մրգեր հասան,  
Ինձ բաժին չկայ, ախ սիրտս կուլայ:

Յուլիսում բոլորն հնձեցին արտեր,  
Դեռ ես ցանել չեմ, ինչ պիտի հնձեմ,  
Օգոստոսի մէջ կարմիր խնձորներ,  
Սև են ինձ համար, էր մնամ անճար:

Սեպտեմբերն հասանք, ժամն է խաղողի,  
Պտուղ շատ համեղ, ցաւիս չեղաւ դեղ,  
Ա՛խ, դու Հոկտեմբեր, եկաւ նոր գինին,  
Խմեցի համով: Ինձ լցրեց ցաւով:

Յոյսըս քեզ մնաց նոյեմբեր ամիս,  
Գոնէ բաց մի դուռ, մի նայիր ինձ ծուռ,



Ե՛հ, դու Գեկտեմբեր, դու էլ զուր կանցնիս,  
Ոչ այգիս ծաղկաւ, ոչ վարդս բացուաւ:

### ՍԱԳՈՒՆԻՒ ՅԻՉԱՏԱԿԻՆ

Երկինք ամպամած, երկիրն է խոնաւ,  
Ա՛խ սիրտս մի նոր վշտով լզացաւ,  
Նա մի մեծ մարդ էր, մաքուր ու անբիծ,  
Վաղաժամ ընկաւ իր եղբօր սրից.  
Այն մեծ գործիչը — Սագունին գնաց,  
Նորա սուրբ իղձը իր սրտում մնաց:

Նա մի քաղցրաբօյր ծաղիկ էր բացուած,  
Անմահ պտուղներ չորս կողմը ծլած,  
Բայց դեռ անթառամ բոժանուկեց կեանքից,  
Խինդը չքացուց, ախ, մեր սրտերից.  
Այն մեծ գործիչը — Սագունին գնաց,  
Նորա սուրբ իղձը իր սրտում մնաց:

Առաքելական կոչմանն արժանի,  
Հարազատ որդի էր Հայաստանի,  
Տանջանքով լցրած իր վսեմ հոգին,  
Իրեն զոհ տարաւ խեղճ եղբօր գատին.  
Այն մեծ գործիչը — Սագունին գնաց,  
Նորա սուրբ իղձը իր սրտում մնաց:

Ա՛խ, երբ լսեցինք գուժը վշտալի,  
Մեր սրտերն այրեց հուրը սոսկալի,  
Անգուլթ, անողոք, եղբայրասպան,  
Ազգդ ուրացար, եղար դաւաճան.  
Այն մեծ գործիչը — Սագունին գնաց,  
Նորա սուրբ իղձը իր սրտում մնաց:

Յեղափոխական վեհ գաղափարով,  
Լքուած, օժտուած անաչառ հոգով,  
Սիրոյ սերման էր հաւասարութեան,  
Սյրեց մեր հոգին իջաւ գերեզման.  
Ա՛խ մեծ գործիչը — Սագունին գնաց,  
Գառն կսկիծը մեր սրտում մնաց:

### ՀՆՉԱԿԵԱՆԻ ՈՒԽՏԸ

Թէ սև ու մութ ամպերէն,  
Կարկուտ տեղայ իմ գլխին,  
Եւ շանթալի կայծակներ,  
Հարեն կուրծքս պատառեն:  
Թէ բիւրաւոր վիշապներ,  
Ինձ կլանել սպառնան՝  
Պիտի կրեմ ճակատիս,  
Սուրբ կնիքը Հնչակեան:



Թէ իմ նաւը տատանուի,  
Ալեկոծեալ ովկիանում,  
Եւ կատաղի ալիքներ,  
Ինչ խորտակեն մինչ խորքում:  
Թէ ինչ այնտեղ կաշկանդեն,  
Ոգիները գիւական՝  
Պիտի կրեմ ճակատիս,  
Սուրբ կնիքը Հնչակեան:

Թէ փշրտեն ոսկերքս,  
Ծանր մուրճի հարուածով,  
Եւ փաթաթեն դժոխքում,  
Սաղաչելի շղթայով:  
Թէ հրեղէն սրերով,  
Կտրատեն սիրտս բանան՝  
Պիտի կրեմ ճակատիս,  
Սուրբ կնիքը Հնչակեան:

Թէ տանջանաց գործիքներ,  
Իժոխալին մեքենայք,  
Եւ չար գիւաց սուր նետեր,  
Կտրեն, խալթեն ինչ արագ:  
Թէ տակաւին ալլանդակ,  
Պիտի տանջուիմ լաւիտեան,  
Պիտի կրեմ ճակատիս,  
Սուրբ կնիքը Հնչակեան:

Թէ զազանաց վոհմակներ,  
Երջապատեն միայնակ,  
Եւ սոսկալի տանջանքով,  
Պատառոտեն ինչ անյագ:  
Թէ ամեհի վայրերում,  
Լոկ ոսկորներս էլ մնան՝  
Պիտի կրեմ ճակատիս,  
Սուրբ կնիքը Հնչակեան:

Ահա այսպէս ուխտեցի,  
Հաւատարիմ ծառայել,  
Այդ տանջանաց բովերից,  
Բնաւ երբէք չ՝սարսել:  
Հնչակեան մեծ խորհուրդը,  
Պիտի սլաշտեմ լաւիտեան,  
Եւ անվեհեր քարոզեմ,  
Բարձրութիւնը Հնչակեան:





\*  
\* \*

Գեղեցկուլթեանդ վերայ յոյս մի դնիր,  
Ուսում չունիս, հանճար չունիս, խելք չունիս,  
Սիրոն, հեռուն դիտէ, հպարտ մի լինիր,  
Վարդի նման դուն էլ շուտ կը թառամիս:

Դու սիրում ես մի լաւ երիտասարդի,  
Թշուառ, նա քեզի հետ կատակ է անում,  
Ականջդ բաց, ամեն ինչ լաւ հասկացի,  
Նա խելք ունի անկիրթ ազջիկ չի սիրում:

Թէկուզ լինիս դու երկնային հրեշտակ,  
Ինչ՞ու ես պէտք, թէ որ չունիս զարգացում,  
Զարդերով պճնուած, լեր մի արեգակ,  
Դատարկ կարաս կլնիս, թէ չունիս ուսում:

\*  
\* \*

Վ Բարփի գլխին ունիմ տուն,  
Տանս միջին երկու սուն,  
Դարտս էնքան շատ է որ,  
Գիշերները չունիմ քուն:

Տանս տակից ջուր բխար,  
Եարա սիրտս լուանար,

Եարիս տուած եարէքը,  
Իրան ձեռքով լաւանար:

Բաղչա ունիմ ծաւներով,  
Մէջը լիքն է գառներով,  
Գառներ մատաղ անէի,  
Անուշ եարիս ձեռներով:

Առաւօտը բացուել ա,  
Ղուշն անուշ կը ճլվլայ,  
Ի՞նչ քարասիրտ, մարդ պիտի,  
Որ ինձ տեսնի ու չլայ:

Բաղ եմ քցել նոր ինոր,  
Հասցրել եմ մի խնձոր,  
Եարիս տեսնելու համար,  
Քանի ընկնեմ սար ու ձոր:

\*  
\* \*

Չունիմ հանգիստ, չունիմ քուն,  
Միշտ քո սիրով եմ այրվում,  
Երեսրս ժպիտ չի գար,  
Ապրում եմ տխուր — տրտում:



Օրըստօրէ մաշվում եմ,  
Անհամբեր սպասում եմ,  
Եկ նոր կեանք տուր խղճալոյս,  
Այս երկտողով խնդրում եմ:

Միթէ սիրտդ քարացած,  
Թողնելու ես միշտ այրուած,  
Գու լաւ գիտցիր, սիրուհիս,  
Որ քո սիրովդ եմ շիւթուած:

Պահիր ինձ իբրև ծառայ,  
Հէնց այդ էլ անձս առայ,  
Երգվում եմ Տիրոջ առաջ,  
Քեզ երբէք չեմ մոռանայ:

Գու ինձ ինչպէս մոռացար,  
Թողիր անտէր — հեռացար,  
Հոգեակ, խղճա իմ կեանքին,  
Մահու պատճառ մի դառնար:



\*  
\* \*

Մալ ու մալալս ջարդեցին,  
Քիրալ քարվանս կտրեցին,  
Տղէքս անօթի թողեցին.  
Ես ո՛ւմ էրթամ գանկատ անեմ,  
Որ իմ դարտին դարման ճարեմ:

Երկնքից էկաւ պատուհաս,  
Քաղաք թէ գեղ կրեց վնաս,  
Մարդ չը մնաց ցաւից անմաս.  
Ես ո՛ւմ էրթամ գանկատ անեմ,  
Որ իմ դարտին դարման ճարեմ:

Թացը չսրի հետ վառեցին,  
Սաղ թէ հիւանդ կոտորեցին,  
Տկլոր մնաց խեղճ գեղացին.  
Ես ո՛ւմ էրթամ գանկատ անեմ,  
Որ իմ դարտին դարման ճարեմ:

Երկաթ մաշինէն ամեն տեղ,  
Կերթայ կուգայ քաղաք թէ գեղ,  
Մենք շատցեր ենք, տեղերս էլ նեղ.  
Ես ո՛ւմ էրթամ գանկատ անեմ,  
Որ իմ դարտին դարման ճարեմ:



Ձմեռն էկաւ վրա հասաւ,  
Մերկ մնացինք չունինք հալաւ,  
Տարին վրէպքըս վատ անցաւ.

Ես ո՛ւմ էրթամ գանկատ անեմ,

Որ դարտերիս գարման ճարեմ:

\*

\*\*

Մի սիգաւէտ դաշտում ընկած՝  
Վշտերիս հետ միասին,  
Խառընվում էր մրմունջներս,  
Լուռ հոգերի հոսանքին:

Կարտասուէի մուլթ գիշերով,  
Հեկեկանքս իմ մօտից —  
Ձէր հեռանում, որ մարդ լսէր,  
Հասնէր, լինէր կարեկից:

Վէրքերս էին, որ չ'թողին —  
Ինչ միայնակ այն պահուն,  
Մերկ մարմինս փայփայեցին,  
Այ արեանս ծորելուն:

Նոր կեանք առի յաւերժական,  
Երբ որ ընկայ կռուելով,  
Յանուն թշուառ արգարութեան,  
Յանուն ազգիս վէրքերով:





« Ազգային գրադարան



NL0350989



47586